

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

L. ՏԱՐԻ ԹԻԲ 44 (1494) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 04, 2010  
VOLUME 30, NO. 44 (1494) SATURDAY, DECEMBER 04, 2010



Պաշտօնաթերթ՝  
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ԱՅՍ ՏԱՐԻԱՆ ԹԵԼԵԹՈՆԸ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԻ ՉԱՓԱՆԻՇ ՏՕԳԹ Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր, 20 նոյեմբեր 2010 թուակիր համարին մէջ, անդրադարձանք «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած 13-րդ քելեթոնային հանգանակութեան մասին: 25 նոյեմբեր 2010-ին տեղի ունեցաւ, մշտապէս «Գոհարանութեան Օր»ուան գուգադիպող եգակի նշանակութիւն ունեցող հանգանակութիւնը, որուն տալիք արդիւնքը, ըստ մեր նախատեսութեան, պիտի ըլլար եգակի՝ ե՛ւ իր որակով ե՛ւ իր ձեռք բերած նիւթական արդիւնքով: Ուրախ ենք յայտնելու, որ այդպէս ալ եղաւ:

Անցնող սկզբնական տասը տարիներուն վրայ հիմնդէն-եօթը միլիոնով սկսած, ապա առաւելագոյնս, նախորդ տարուան տասնըհինգ միլիոնի հասած հանգանակուած գումարը՝ այս տարի, վեց միլիոն տուարի մեծ տարբերութեամբ գերազանցուեցաւ: Այս երեւոյթը ցոյց կու տար մեր ժողովուրդի կապուածութիւնն ու նուիրումը Արցախ աշխարհին եւ անոր զարգացման գործընթացին՝ հաստատապէս մերժելով ամէն կարգի մկրատման նախաձեռնութիւն, որ կրնար խնդրոյ առարկայ դարձնել անոր հողային ամբողջականութիւնը:

Այս տարուան վեց միլիոն տուարի մեծ տարբերութեամբ գերազանցուած հանգանակուած գումարը պատահական չէր: Հոն իրենց դերը ջերմապէս խաղցած էին հայ ժողովուրդի խորը հայրենասիրութիւնը, արժանապատուութիւնը, միասնական կեցուածքը եւ հաւատքը՝ հանդէպ իր ապագային:

Արդարեւ, հոն, քելեթոնի պատուով վրայ էր Արցախով խանդավառ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի շուրջ միասնացած մեր երախտաշատ ժողովուրդը, իր կրթական կառոյցներու մատղաջ սերունդներու, անցնող ուսումնական տարուան շրջանին հետեւողականօրէն կատարած հայրենասիրական խնայողութիւններով: Հոն էր ան՝ ասպարէզով մասնագէտ, կամ պարզ աշխատանքող սով, որ քիչ ու շատով բերաւ իր նիւթական շնորհակալ մասնակցութիւնը: Ներկայ էր ան իր շինարար բարերարներու ասպետական ներդրումներով եւ քաղաքական ելոյթներով: Հոն էր մեր ժողովուրդը, իր հոգեւոր պատգամներով եւ մաղթանքներով քաղաքը՝ կրօնական պետերով: Ներկայ էր ան իր ազգային քաղաքական կուսակցութիւններուն ունեցած նպատակասլաց, այլապէս խթանիչ

Շաբ.ը էջ 18

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵԼԵԹՈՆԻ ԱՌԹԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ ԱԲԵԼԻ ՔԱՆ 20 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՆ

Նոյեմբեր 25-ին տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի 13-րդ տարեկան թելեթոնը, որու ընթացքին Հայաստանէն ու Սփիւռքի տարբեր երկիրներէն հաւաքուած գումարները կազմեցին 20 միլիոն 862 հազար 733 տուար:

12 ժամուայ վրայ երկարող թելեթոնը տեղի ունեցաւ Լոս Անճելըսի մէջ ու սփռուեցաւ երկրագունդի գրեթէ բոլոր կողմերը: Թելեթոնին մասնակցելու համար Լոս Անճելըս ժամանած էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանը Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանը, ինչպէս նաեւ հաղորդավարներ ու արուեստագէտներ Հայաստանէն:

Այս տարուայ թելեթոնը տեղի ունեցաւ «Ջուրը կեանք է» կարգախօսին տակ, նպատակ ունենալով Արցախի գիւղերու ջրամատակարարման համակարգի կառուցումը:



«Հայաստան» հիմնադրամի գործադիր վարչութեան հասարակացութեան հետ կապերու բաժնի ղեկավար Յասմիկ Գրիգորեանը «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց որ, թելեթոնի ըն-

թացքին յայտարարուած գումարներուն մէջ ներառուած են բոլոր այն գումարները, որոնք հաւաքագրուած են «Հայաստան»  
Շաբ.ը էջ 4

## ԲԱՅԱՅԱՅՏՈՒԱԾ ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԶԱՅՐՈՅԹ ՅԱՅՏՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴԵՊԻ ԻՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԶԵՆՔԵՐՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Նոյեմբեր 28-ին «Ուիլքիլիքս» կայքէջը հրատարակեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան պատկանող հարիւր հազարաւոր գաղտնի փաստաթուղթեր, որոնք եկան դիւանագիտական մեծ իրարանցում յառաջացնելու աշխարհի գրեթէ բոլոր մայրաքաղաքներուն մէջ:

Բացայայտուած փաստաթուղթերէն մէկը կը վերաբերի Հայաստանէն դէպի իրան գէնքերու փոխադրութեան: 2008 թուականի Դեկտեմբերին Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի փոխանորդ ձոն Նեկրափոնթէ, Երեւանի ղեկավարման միջոցաւ խիստ նամակ մը յղած է Սերժ Սարգսեանին, զայրոյթ յայտնելով գէնքերու իրան փոխադրումին կապակցութեամբ:

2003 թուականին Հայաստան նպատած է, որ իրան հրթիռներ եւ գնդացիներ ձեռք ձգէ: Այդ գէնքերը 2007-ին օգտագործուած են իրաքի մէջ շիա գիւնեալներու կողմէ՝ ամերիկացի զինուորականներու դէմ:

Ըստ փաստաթուղթի, Միացեալ Նահանգներու պետական քարտուղարը Քոնտրոլիզա Ռաջա ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի առթիւ այս հարցը նախ քննարկած է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ, սակայն ան հերքած է գէնքի փոխանցման իրողութիւնը:

Ճորձ Պուշի նախագահութեան վերջին օրերուն գրուած նամակը կը սպառնայ պատժամիջոցներ գործադրել Հայաստանի դէմ եւ կը ներկայացնէ շարք մը քայլեր, որոնք պէտք է առնուին իշխանութիւն-

ներուն կողմէ, որոնց շարքին՝ իրաւունք տալ Ամերիկացի մասնագէտներուն, անակնկալ ստուգումներ կատարելու Հայաստանի մէջ:  
Միջազգային մամուլին մէջ լոյս տեսած տեղեկութիւններու համաձայն, Ամերիկան այս սպառնա-

լիքներուն պատասխանելով, Սերժ Սարգսեան համաձայնած է ենթարկուիլ նամակին մէջ յիշուած պայմաններուն:  
Հայաստանի նախագահի խօս-  
Շաբ.ը էջ 4

## ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐՏՈՂԱՆԻՆ ՅԻՇԵՑՈՒՑ ՉՍՈՒՆԱԼ ԵՒ ՅԱՐԳԵԼ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ



Լիբանանահայութիւնը երէկ իր քաղաքական բոլոր հոսանքներով մասնակցեցաւ Թուրքիոյ վարչապետ Ռեճէպ Թայյիփի էրտողանի Լիբանան կատարած այցելութեան առիթով հայ քաղաքական երեք կուսակցութիւններու նախաձեռնութեամբ Պէյրութի Նահատակաց

հրատարակին մէջ կազմակերպուած բողոքի հաւաքին:  
Լիբանանի տարբեր շրջաններէն, Պէյրութի արուարձաններէն բազմահազար հայորդիներ, լիբանանեան դրօշներով, պատառներով  
Շաբ.ը էջ 19

# ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԵ ՊՕՅՔՕԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՅԱՐՈՒԹՅՆԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Միայն տարի մը առաջ էր երբ Սերժ Սարգիսեանի վարչախումբի կողմնակիցները կը գովերգէին անոր նախաձեռնողական քաղաքականութիւնը: Անոր «ֆուլթայթըր» եւ «փրոթոթայթըր» նախաձեռնութիւնները կը ներկայացուէին որպէս Հայաստանի արտաքին քաղաքականութեան նուաճումներ, որոնցմով հակազդեցութիւնէ կ'անցնէր նախաձեռնողականութեան, պաշտպանական դիրքէ կ'անցնէր յարձակողականի, «չըրկացնելով» հակառակորդները:

Այս նախաձեռնողական եւ յարձակողական քաղաքականութեան մեկնարկէն հազիւ տարի մը ետք, Սերժ Սարգիսեանի վարչախումբը յանկարծ կ'անցնէր պոչքօթի քաղաքականութեան, «Աղթամարեան» ու «Լիզպոնեան» հակազդեցութիւններով: Ու բնականաբար վաշախումբի կողմնակիցները կը սկսին գովերգել անոր ինչպէս ու մտածուած քաղաքականութիւնը: Այս անգամ գովեալը հակառակորդները «չըրկացնելով» մասին չէ, այլ՝ Հայաստանի արժանապատու-

թիւնը բարձր պահելու մասին է: Երբ մէկ տարուան մէջ պետութիւն մը կը ստիպուի քաղաքական «կուրս»ի 180 աստիճան փոփոխութիւն կատարել, այդ մէկը նշան է անոր վարած քաղաքականութեան անանկութեան: Որ բնականաբար կ'առաջնորդէ հակառակ հարցումին՝ նախկին թէ ներկայ կուրսները որքանով կը համապատասխանէին պետական գերագոյն շահերուն: Արդեօք ատոնք արդիւնք էին սերտուած ուսումնասիրութեանց, թէ պարզապէս կը հետապնդէին հատուածական շահադիտական նպատակներ եւ կամ աւելի վատ՝ արդիւնք էին դուրսէն եկած թելադրանքներու:

Պօչքօթը քաղաքական կեանքի մէջ իր տեղը ունի, բայց միայն որպէս ծայրայեղ եւ վերջին միջոց: Ձեռք ուզէր մտածել թէ մեր վիճակը վատթարացած է այնքան, որ ուրիշ ելք չենք գտնէր, բացի Աղթամարն ու ՆԱԹՕի Լիզպոնեան գաղաթափողով պօչքօթելու ստիպողութենէն: Ատոնք պարզապէս կը բացայայտեն վարչախումբի վարած սնանկ քաղաքականութիւնը:

## ՊԱՐՈՆԱՅՔ ԲՈՆԱՊԵՏՆԵՐ, ԻՇԽԱՆԱԶԱՒԹՆԵՐ

### ԷՄԻԼ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Դուք, լինելով շատ թէ քիչ գրագէտ, գիտակից մարդիկ, հասկանում էք, որ գինուորական ստորաբաժանումներում հնչած եւ գիրնուորների կեանքը իսկող կրակոցներն իրականում ձեր դէմ են ուղղուած: Այսօր բանակում տեղի ունեցող ցանկացած բացասական երեւոյթների մեղքը ձեր վրայ վերցնելու պատասխանատուութիւնից դուք ճողոպրում էք հենց այն պատճառով, որ բանակում գնդակահարում է ձեր «բարոյականութիւնը», հանրային վարքագծի ձեր նորմերն ու արժէքները:

Բանակի հանդէպ ունեցած ձեր անարդար վերաբերմունքի հետեւանքով դուք՝ սկսած առաջին դէմքից մինչեւ իր մերձակորները, նախարարները, պատգամաւորները, գեներալները եւ իրենց բոլոր ազգականներն ու մերձակորները՝ ձեզնից սերուածներին ազատում էք բանակային ծառայութիւնից կամ տեղակորում յարմարաւէտ եւ տաքուկ տեղեր՝ դրանով իսկ դրսեւորում էք եւ սերմանում «կաստայական-ընտրախաւային» թշնամանք հասարակութեան նկատմամբ: Ձեզ համար այդ սկզբունքը դարձել է գործելաոճ եւ գործում է գիտութեան ու կրթութեան, տնտեսութեան եւ արդարադատութեան, սոցիալական եւ գիրնուորական ծառայութեան ոլորտներում, առ հասարակ ազգային կարեւորագոյն շահերի բոլոր ոլորտներում:

Այս ամէնի հետեւանքով իրապէս վտանգուած է ազգային անվտանգութիւնն ու պետականութիւնը: Նիւթական արժէքներին տիրանալու, դրանք բազմապատկելու հարցում դուք յազուրդ տուեցիք ձեր չարչիւսեան ձգտումներին ու մեղսակոր նկրտումներին: Դուք օտարուեցիք հասարակութիւնից: Ձեզ ենթարկեցրիք իրաւապահ եւ ծառայողական մար-

միները, Սահմանադրութիւնը, ձեզ շրջապատեցիք գինուած պահակամբերով, որպէսզի ձեր կատարած բոլոր յանցագործութիւններն ու իրաւախախտումները մնան անպատիժ: Ձեր գոռոզամտութիւնը, անձեռնմխելիութիւնն ու ամենակարող կեցողութիւնը՝ ձեր իսկ ստեղծած ամենաթողութեան միջոցով տուած մարտահրաւէր է, նետուած արդարութեան եւ զարգացման ձգտող հասարակութեանը, ժողովրդին: Դուք, չարորակ ուռուցքի նման ախտահարում էք ազգային եւ պետական գործունէութեան բոլոր կարեւորագոյն օղակները:

Այսօր բանակում տեղի ունեցող միջոցառումները այդ չարորակ հիւանդութեան ախտանշաններն են, որի մետաստազները խորապէս մխրճուել են բանակի բոլոր կառուցներում, ախտահարելով ամէն ինչ:

Բանակը դուք ծառայեցնում էք հասարակութեան նկատմամբ ձեր կաստայի հեղեմնիւրան ապաստովելու, հայ ժողովրդին օտար եւ խորթ արժէքներ պարտադրող ուժային յենարան:

Այսօր բանակում գնդակահարում է Ձեր «բարոյականութիւնը»: Ձեր անբարոյ կեցուածքով դուք էք այդ յուսահատ կրակոցների թիրախը: Ձեր «բարոյականութեան» կողմից ճնշուած, ոտնատակ արուած ազատութեան ձգտող անհատն է, որ լուծում է ստեղծուած անելանելի գոյապայմաններից ոգու ազատագրման խնդիրը:

Դուք էք գինուորների եւ գինուած առաջնորդների համար ստեղծել գոյութեան եւ գոյապահպանութեան հիմնախնդիր, որը երկսայր է:

Այսօր դուք վիրտուալ թիրախ էք, վաղը կը դառնաք իսկական թիրախ:

Պարտնայք բռնապետներ, կամաւոր հրաժարուէք իշխանութիւնից, որին այդպէս կառչած էք:

« 7 0Ր »

# ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐՇՆ ՈՒ ՕՏԱՐ ԴԵՄԱՐՇՆ ԶԱՆՅԱԾ-ԶԳՆԱՅԱԾ ԲԱՆԵՐ

## ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

ՆԱՏՕ գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ Ռոբերդ Միմոնսը, ով ի դէպ առաջիկայ օրերին վայր է դնում իր լիազօրութիւնը, օրերս յայտարարեց, թէ ՆԱՏՕ համար հասկանալի է Սերժ Սարգսեանի դիրքորոշումը, սակայն ափսոսում են, որ նա չմասնակցեց Լիսաբոնի վեհաժողովին: Միմոնսը, այդ ամէնով հանդերձ, նաեւ յայտարարել էր, որ ՆԱՏՕ-ն Ղարաբաղի հարցում ջնդակցում է Մինսկի խմբի եւ նրա հռչակած երեք սկզբունքների «կոմբինացիային»՝ տարածքային ամբողջութիւն, ազգերի ինքնորոշում եւ ուժի չկիրառում:

ՆԱՏՕ-ն նոր չէ, որ յայտարարում է այդ մասին: Հիւսիսատլանտեան Դաշինքը Ղարաբաղի հարցում միշտ էլ ձեռնպահ է մնացել միջամտութիւնից եւ յայտարարել, որ այդ խնդիրը ԵԱՀԿ շրջանակի եւ դրա մանդատով գործող Մինսկի խմբի տիրոջն է: Այժմ ՆԱՏՕ-ն, Սերժ Սարգսեանի այսպէս ասած լիսաբոնեան դեմարշի առիթով, եւս մէկ անգամ յայտարարում է այդ մասին: Այլ կերպ ասած, ՆԱՏՕ-ն ցոյց է տալիս, որ այդ դեմարշը բացարձակապէս գուրկ էր որեւէ լուրջ դիւանագիտական հիմքից:

Բանն այն է, որ հակամարտութիւնների վերաբերեալ պետութիւնների տարածքային ամբողջութեան եւ անկախութեան անձեռնմխելիութեան մասին ՆԱՏՕ-ն յայտարարել է միշտ, ինչը սակայն Հայաստանի իշխանութեանը, այդ թւում Սերժ Սարգսեանին, չի խանգարել ՆԱՏՕ-ի հետ շփումներ ունենալ, այցելել ՆԱՏՕ կենտրոնակայան, բարձր մակարդակի հանդիպումներ եւ համատեղ մամուլի ասուլիսներ ունենալ: Հետեւաբար, զարմանալի է, թէ ինչու յանկարծ որոշուեց բոլորով լիսաբոնը:

Յայտնի մի անեկողտ կայ, երբ մի մարդ նստում է տաքսի եւ ճանապարհին վարորդին ասում, թէ ինքը մտաւախութիւն ունի, որ վերջում կարող է մոռանալ, եւ այդ իսկ պատճառով խնդրում է փողը հենց հիմա վերցնել: Վարորդը վերցնում է: Մի քիչ էլ գնալուց յետոյ ուղեւորը նորից դիմում է վարորդին եւ ասում, թէ վախենում է վերջում մոռանալ եւ խնդրում է փողը հենց հիմա վերցնել: Վարորդը տարակուսած վերցնում է: Մի քիչ էլ գնում են, եւ ուղեւորը նոյն խնդրանքով էլի դիմում է վարորդին, որը նորից վերցնում է, բայց մի քիչ վատ զգալով, որ սկզբնային ուղեւորը դեռ տեղ չհասած արդէն մի քանի անգամ վճարել է ուղեվարձը: Երբ տեղ են հասնում, ուղեւորը նորից հանում է գրպանից փողը որ վճարի, բայց վարորդն արդէն անյարմար է զգում փողը այս անգամ էլ վերցնել եւ հրաժարուած է, դիմադրում: «Է ինչի, ամբողջ ճանապարհին վերցրիր, հիմա էլ չեմուշում ես անու՞մ», ասում է ուղեւորը:

Ստացուած է, որ Հայաստանն ամբողջ ճանապարհին «վերցրել է փողը», մէկ էլ հասնելով Լիսաբոն՝ սկսել է «չեմուշում անել»: Ինչու: Չէ որ կարելի էր գտնէ ճանապարհին էլ մի քիչ «չեմուշում անել», մի քիչ դժգոհութիւն կամ մի քիչ

մտահոգութիւն յայտնել, որ ՆԱՏՕ-ն անընդհատ հակամարտութիւնների կարգաւորման հարցում միեւնոյն սկզբունքն է յիշատակում, որ եթէ այդպէս շարունակուի, ապա Հայաստանը կարող է եւ աննպատակաշարժար գտնել ՆԱՏՕ-ի բարձր մակարդակի հաւաքների մասնակցելը:

Հագիւ թէ պաշտօնական Երեւանն այնքան միամիտ էր, որ կարծեր, թէ Լիսաբոնի վեհաժողովի նախօրէին չգնալով վեհաժողով, Սերժ Սարգսեանն իրար էր խառնելու ՆԱՏՕ-ն:

Թւում է, թէ արդէն անցած գնացած բան է եւ անտեղի ժամանակի ու էներգիայի վատնում է դրա մասին նորից խօսելը: Բայց դիւանագիտութեան, այն էլ համաշխարհային դիւանագիտութեան մէջ, անցած-գնացած բաներ թերեւս չեն լինում: Հետեւաբար, Լիսաբոն գնալով կամ չգնալով հարցեր չեն լուծուում: Այդպէս հարցերը լուծուում են մնալ, կուտակուել, ծանրանալ: Միւթարութիւն կարող է լինել Մոսկովան, բայց դրանից առաջ էլ թերեւս պէտք է մտածել, իսկ ի՞նչ է Հայաստանը Մոսկովայի համար: Չէ՞ որ Մոսկուան իր հարցերն ունի ՆԱՏՕ հետ, ու յայտնի չէ, թէ ի վերջոյ դրանք ինչպէս եւ ինչ գնով են լուծուելու: Արդեօք պաշտօնական Երեւանը կարող է այդքան

Շաբ.ը էջ 4

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՅԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՊԱՅՆՔԵԱՆ  
 ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ՊԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ  
 ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
 Փն. (626) 797-7680  
 Ֆաքս. (626)797- 6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ԸԱՅԱՍՏԱՆ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ՎՍԱԴՔ Է՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՇԱՏ ԱՐԱԳ ԼՈՒԾՈՒԵԼՈՒ Է

Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանը վստահ է, որ անազատութեան մէջ գտնուող ընդդիմադիրների ազատ արձակման հարցը «շատ արագ» լուծուելու է:

«Այդ հարցը լուծուելու է, ես չեմ կասկածում, շատ արագ: Տարբեր ձևեր են կիրառուելու իրենց դէմքը փրկելու համար, տարբեր ձևեր՝ մէկ երրորդ, կէս, չգիտեմ՝ մէկին հիւանդութեան պատճառով կարող են ազատել, ներում չնորհել՝ առանց դիմում գրելու՝ մերոնցից ոչ ոք դիմում չի գրի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց Տէր-Պետրոսեանը:

Նա իր գլխավորած Հայ ազգային կոնգրէսին անդամակցող գրեթէ բոլոր ուժերի ղեկավարների հետ այցելել էր Շիրակի մարզի Ձորակապ գիւղ եւ հիւրընկալուել օրեր առաջ քրէակատարողական հիմնարկից վաղաժամկէտ ազատ արձակուած Մուշեղ Սաղաթէլեանի հայրական տանը:

Մուշեղ Սաղաթէլեանը անազատութեան մէջ էր 2 տարի 9 ամիս: Նա 2008 թուականի իրադարձութիւնների հետեւանքով 5 տարուայ ազատագրկման էր դատապարտուել ասոր գէնք կրելու եւ իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ կեանքի կամ առողջութեան համար վտանգաւոր բռնութիւն կիրառելու մեղադրանքներով:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում Սաղաթէլեանը նշեց, որ դեռ Սեպտեմբերին էր պատժի կրումից վաղաժամկէտ ազատ արձակուելու, սակայն «երկու ամսով յետաձգեցին» նոյեմբերի 3-ին ներկայացրեցին».



Ազատ արձակուած ֆաղափախ կամ քանտարկեալ Մուշեղ Սաղաթէլեանի

համար, որ իրենք գիտէին՝ ես պահանջելու էի օրէնքով, որ «տուէ՛ք ինձ մերժման որոշումը՝ ես դատարանում ձեզ դատի տամ»: Ես չունէի սոյժ, պէտք է ներկայացնէի, տակը պատճառաբանէի՝ «ինչո՞ւ ինձ չեն ցանկանում ազատել, ինչո՞ւ էք ինձ մերժում, պատասխան տուէ՛ք»՝ չեն տալիս»:

«Իհարկէ, անօրէն երկրում ենք ապրում, իրենք կարող էին արհամարհել-անցնել, բայց ճշումները՝ քաղաքական ճշումները, միջազգային ճշումները, նրանք էլ են ասում, որ «մենք գիտենք իրականութիւնը, ինչո՞ւ ես ապօրինի նորմալ մարդու պահում», - ասաց Մուշեղ Սաղաթէլեանը:

«Ես գիտեմ եմ՝ քաղաքական գործիչ չեմ, ես պայքարում եմ՝ իմ երկրում ազատութիւն եւ արդարութիւն լինի», - եզրափակեց նա:

«ՅԱՌԱԶԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ-Ի ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔՆԵՐԻ ԶԻ ԴԻՄԻ»

Հանրապետական կուսակցութեան պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեանն Նոյեմբեր 30-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ մի շարք ուշադրաւ յայտարարութիւններ արեց: Ներկայացնելով Ընտրական օրէնագրքի փոփոխութիւնների նախագիծը՝ Ռաֆիկ Պետրոսեանը յոյս յայտնեց, որ այն կը նուազեցնի խախտումների ու քուէարկութեան ժամանակ լցնումների դէպքերը:

Հարցին, թէ արդեօ՞ք նման բան ասելով ՀՀ-ն ընդունում է, որ հայաստանեան ընտրութիւնների ժամանակ եղել են լցնումներ եւ դրանք կատարել է ՀՀ-ն, Ռաֆիկ Պետրոսեանն արձագանքեց, թէ հարցը կազմուած է «սարքովի դատողութիւններով», քանի որ ՀՀ-ն մեծամասնութիւն է կազմել իր ունեցած քաղաքական կշռի, կատարած աշխատանքի եւ կուսակիցների շնորհիւ: «Հայաստանում ամենաբարձր մակարդակ ունեցող քաղաքական ուժը ՀՀ-ն է եւ դա ամենեւին էլ չի նշանակում, որ բոլոր լցնումները հենց նա է կատարել», - յայտարարեց պատգամաւորը՝ միեւնոյն ժամանակ նշելով, որ ՀՀ-ն չի ժխտում լցնումների փաստը:

«Ես Նոր Նորքում 3 անգամ մասնակցել եմ ընտրութիւններին եւ անընդհատ ականատես եմ եղել, թի ընդդիմութիւնը՝ այսօրուայ «Ժառանգութիւնը», որ այդպէս մեծ-մեծ խօսում է, ինչպէս է ձգտում լցնումներ կամ խախտումներ, կեղծիքներ անելու, փող բաժանելու հարցերում: ՀՀ-ն չէ, որ այդ լցնումները կատարել է. նա դրա կարիքը չունի, այսօր էլ չունի», - յայտարարեց Ռաֆիկ Պետրոսեանը: Նա երաշխաւորեց,



Հանրապետական կուսակցութեան պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեան

որ գալիք ընտրութիւններում ՀՀ-ի կողմից լցնումների եւ ընտրախախտումների դէպքեր չեն լինի:

«Այո, երաշխաւորում եմ, որ ՀՀ ներկայացուցչների կողմից այդ լցնումները չեն լինի, որովհետեւ նախկինում կատարուած մէկ-երկու խախտումների պատճառով նրանք դատուեցին եւ կուսակցութիւնը նրանք տէր չկանգնեց», - ասաց Պետրոսեանը՝ համոզմունք յայտնելով, որ առաջիկայ ընտրութիւնների արդիւնքում ՀՀ-ն ԱԺ-ում կ'ունենայ նոյնքան տեղ, որքան ունի այսօր: Ինչ վերաբերում է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեանը, ապա, ըստ Ռաֆիկ Պետրոսեանի, հնարաւոր է, որ «ԲՀ-ի տոկոսը մի քիչ բարձրանայ, որովհետեւ նրանք իսկապէս աշխատում են եւ մեր աչքի առաջ լաւ էլ աշխատում են»:

Ռաֆիկ Պետրոսեանի յայտարարութիւններին «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը արձագանքեց. «Ես հեզմանքով կը պատասխանեմ՝ երեւի Մարտի 1-ն է՞լ ենք մենք արել, երեւի 10 քաղաքացիներին է՞լ ենք մենք զնդաւակահարել»:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԵԱՅ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՒԲԵԼ ԵՆ ՇՈՒՐՁ 9,5 ՏՈՒՆՈՎ

Ըստ Նոյեմբերի 30-ին հրատարակուած պաշտօնական վիճակագրութեան՝ 2010 թ. Յունուար-Սեպտեմբերին տնտեսութեան իրական հատուածում օտարերկրեայ ներդրումների ծաւալը կազմել է 472,2 մլն. դոլար, որը 2009 թ. նոյն ժամանակաշրջանի համեմատ նուազել է 9,5 տոկոսով: Ուղղակի ներդրումները կազմել են 348,7 մլն. դոլար եւ նուազել 9,3 տոկոսով:

Ռուսաստանը շարունակում է մնալ խոշորագոյն ներդրողը Հայաստանում: Ռուսական ընկերութիւնները 2010 թ. 9 ամսում Հայաստանի տնտեսութիւն են ուղղել 191 մլն դոլար՝ մօտաւորապէս այնքան, որքան նախորդ տարի: Երկրորդ խոշորագոյն ներդրողը Ֆրանսիան է՝ 116 մլն դոլար: Սակայն այստեղ նախորդ տարուայ համեմատ առկայ է 20 տոկոս անկում:

Ներդրումների ծաւալով Ֆրանսիային հետեւում է Նիդերլանդները՝ 63 մլն դոլար:

2010 թ. գերմանական ներդրումները Հայաստանում աճել են 2,1 անգամ, իսկ Մեծ Բրիտանիայինը՝ 5,7 անգամ: Սակայն այս երկրները դեռեւս խոշոր ներդրումային գործընկեր Հայաստանի համար չեն հանդիսանում՝ Գերմանիան ներդրել է 21 մլն դոլար, իսկ Միացեալ Թագաւորութիւնը՝ 3,4 մլն դոլար:

ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ ԶՔՕՍԱՇՐՋԻԿ ԵՆ ՀԱՍԱՐՈՒՄ

Հայաստան մտնող զբօսաշրջիկների իրական քանակի մասին տրուած են թիւր ցուցանիշներ, Նոյեմբերի 29-ին մամուլի ասուլիսում յայտարարեց «Աւարայր տուր» զբօսաշրջային ընկերութեան նախագահ Արկադի Սահակեանը: Պաշտօնապէս հաղորդուել է, որ զբօսաշրջիկների քանակը 680 հազար է, սակայն դրանց մէջ հաշուառու են նաեւ Ռուսաստան եւ այլ երկրներ արտագնայ աշխատանքի մեկնած մեր հայրենակիցները, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են հայրենիք, ինչպէս նաեւ իրանից Հայաստան մտնող բեռնատարների վարորդները, որոնք այդ բեռնատարներում էլ գիշերում են: Այդ կերպ՝ ամէն տարի Հայաստան է մտնում մօտ 35 հազար իրանցի «զբօսաշրջիկ»:

Ըստ ներգնայ տուրօպերատորների միութեան նախագահ Ռոբերտ Մինասեանի՝ Հայաստան այցելած 680 հազար անձանցից միայն 10-15 տոկոսն է «իսկական զբօսաշրջիկ», այսինքն՝ օգուտում է տուրօպիստներից, հիւրանոցներից, իրականացնում է քսկուրսիսներ:

Ըստ պաշտօնական տուեալների՝ Հայաստանի հիւրանոցային համակարգն ունի մօտ 10 հազար քնելատեղ, ուր անցեալ տարի իջեւանել են 25-30 հազար զբօսաշրջիկ: Ըստ Ա. Սահակեանի՝ այդ քնելատեղերից առնուազն 3000-ը ժամանցի վայրեր են:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵՑ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ» ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Կոմիտասի ծննդեան 140-ամեայ յոբելեանական հանդիսաշարքի շրջանակում Երեքշաբթի, Նոյեմբեր 30-ին Մատենադարանում բացուեց «Կոմիտաս վարդապետ» խորագրով ցուցադրութիւնը:

Միաժամանակ տեղի ունեցաւ Կոմիտասի կեանքին եւ ստեղծագործութեանը նուիրուած 5 զբքերի շնորհանդէսը:

Դրանք վերջին տարիների ընթացքում լոյս են տեսել Մատենադարանի տնօրէնի խորհրդական, Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի փոխտնօրէն Գուրգէն Գասպարեանի հեղինակութեամբ:

Ուշադրաւ այդ հրատարակութիւններում ներկայացուած են Կոմիտաս վարդապետի նամակներ, ժամանակակիցների յուշերն ու վկայութիւնները նրա մասին, Կոմիտասի լուսանկարների ալբոմը եւ նրա ուսումնասիրութիւնների ու յօդուածների երկհատորեակը:

«Բոլոր այս ժողովածուներում ընդգրկուած նիւթերի գե-



«Կոմիտաս վարդապետ» ցուցադրութիւնը Մատենադարանէն ներս

րակշիւ մասը լոյս է տեսնում առաջին անգամ, եւ պարզուած է, որ Կոմիտասին մենք դեռեւս նոր ենք ճանաչում: Յատկապէս՝ գիտնական Կոմիտասին», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց Գուրգէն Գասպարեանը:

Ցուցադրութեան շրջանակում առաջին անգամ են ներկայացուած Մատենադարանում պահուող այն ձեռագրերը, որոնք ուսումնասիրել է Կոմիտասը:

«Դրանք միջնադարեան հոգեւոր երաժշտութեան ժողովածուներ են, «խաղ զբքեր», որոնց վերձանութեամբ վարդապետը ամբողջ կեանքում զբաղուել է», - ասաց Գուրգէն Գասպարեանը:

**ԼՈՒՐԵՐ**

**ԴՎՎՈՒԹՕՂԼՈՒ. «ՄԵՆՔ ՉԵՆՔ ԶԵՆՔ ԶԵՆՔՈՒՄ, ՈՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԶԱՅԵՐԻ ԶԵՏ ԱՂԵՏԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ»**

«Եթէ նախկինում 20-րդ դարակգբի իրադարձութիւնները հերքուել են, ապա այժմ մենք չենք հերքում, որ Թուրքիայում հայերի հետ աղետալի իրադարձութիւններ են տեղի ունեցել»: Այս մասին, «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի փոխանցմամբ, Վաշինգտոնում յայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմէթ Դավութօղլուն:

Ընդգծելով, թէ Արձանագրութիւնների ստորագրմամբ Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւնների նորմալացման տեսանկիւնից եւս մէկ քայլ առաջ է գնացել, Դավութօղլուն ասել է. «Ընդամենը 10 տարի առաջ Թուրքիայում չէր խօսուում հայկական հարցի մասին, այժմ մեր հասարակութիւնն ազատօրէն քննարկում է այն»:

Թուրքիայի արտգործնախարարի խօսքով՝ Թուրքերի կամ հայերի պատճառով չէ, որ երկու ժողովուրդների միջեւ խնդիրներ են առաջացել: Դավութօղլուն Յեղատպանութեան պատճառը տեսնում է Օսմանեան կայսրութեան փլուզման ընթացքում ազգայնական շարժումների ակտիւացմամբ:

Ըստ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարի՝ իրադարձութիւններից ընդամենը մէկ տարի առաջ, այսինքն՝ 1914-ին, Թուրքիայում հայ նախարարներ կային, եւրոպական մի շարք մայրաքաղաքներում Թուրքիան ներկայացուում էր ազգութեամբ հայ ղեկավարների կողմից, իսկ օսմանեան աղբիւրներում հայերը չիշատակուում էին որպէս «ամենահաւատարիմ հպատակներ»:

«1915-ը կարեւոր տարեթիւ է հայերի համար, սակայն պէտք է չիշել, որ այդ նոյն տարուայ ընթացքում շուրջ 250,000 թուրք է զոհուել ռազմաճակատներից միայն մէկում, որոնց թվում էր նաեւ պապ», - ասել է Դավութօղլուն՝ աւելցնելով. «Եթէ եղել են սխալներ, ապա դրանց մասին պէտք է խօսել: Պէտք է չիշել, որ խօսում ենք պատմական մի ժամանակաշրջանի մասին, որի ընթացքում քաղաքական կարգ ու կանոնը բացակայում էր Թուրքիայի ողջ տարածքում»:

«Ամերիկայի ձայն»-ի այն



**Թուրքիայի արտգործնախարար Ահմէթ Դավութօղլու**

հարցին, թէ արդեօք Թուրքիայում յաջորդ տարի սպասուող ընտրութիւնները, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, թէ այլ պատճառներ կան հայ-թուրքական արձանագրութիւնները թուրքական խորհրդարանում չվաւերացնելու համար, Դավութօղլուն պատասխանել է. «Յաւօք, Հայաստանի Սահմանադրական դատարանը որոշում է կայացրեց, որով բացառեց պատմաբանների յանձնաժողովի ստեղծումը, ինչը կարեւոր էր Թուրքիայի համար»:

Թուրքիայի արտգործնախարարը նշել է նաեւ, որ իր երկրի տեսանկիւնից հայ-թուրքական Արձանագրութիւնների նպատակներն են՝ բարելաւել յարաբերութիւնները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ, հասնել յարաբերութիւնների նորմալացման հայ եւ Թուրք ժողովուրդների միջեւ ամբողջ աշխարհում, կայունութիւն հաստատել կովկասեան տարածաշրջանում:

Ահմէթ Դավութօղլուն իր ելոյթի ժամանակ վերահաստատել է նաեւ պաշտօնական Անկարայի այն դիրքորոշումը, թէ համաձայնագրերի շուրջ փոփոխութիւն չի լինի, քանի դեռ առաջընթաց չի արձանագրուել Լեռնային Ղարաբաղի հարցում:

«Այսինքն, եթէ նոյնիսկ արձանագրութիւնները հաստատուեն առանց հայ-ադրբեջանական համաձայնութեան, ապա իրավիճակի սրման պարագայում Թուրքիան կրկին փակելու է սահմանը», - ասել է Թուրքիայի արտգործնախարարը:

**ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐՇՆ ՈՒ ՕՏԱՐ ԴԵՄԱՐՇԸ**

**Շարունակուած էջ 2-էն**

վստահ լինել, որ մի գեղեցիկ օր էլ կրեմլը, ելնելով Մոսկուա-ՆԱՏՕ յարաբերութեան տրամաբանութիւնից, չի դադարի աջակցել Հայաստանի իշխանութեան ղեմարշներին: Չէ՞ որ ամենաբարդ վիճակներում անգամ, ելքի լաւագոյն տարբերակը սեփական տրամաբանութիւն ունեցող մարշն է, քան օտար տրամաբանութեամբ երաշխաւորուած դեմարշը:

Միւս կողմից, իհարկէ, միանգամ այն հասկանալի է, եւ չիշատակելու համար շատերի կարծիքով գուցէ նոյնիսկ աւելորդ, որ սեփական տրամաբանութեան վրայ հիմնուած մարշի համար անհրաժեշտ է ունենալ սեփական հասարակութեան աջակցութիւնը: Իսկ թէ ինչ է անհրաժեշտ դրա համար, կարծես թէ պարզ է՝ անհրաժեշտ

է չթալանել սեփական ժողովրդի գրպանը, պատասխանատուութեան ենթարկել թալանողներին, անհրաժեշտ է սեփական երկրի քաղաքացիների համար ապահովել աշխատելու, ստեղծագործելու, կրթուելու, բիզնես վարելու, քաղաքականութեամբ զբաղուելու, արտայայտուելու, ընտրելու եւ ընտրուելու բաւարար եւ հաւասար պայմաններ: Միայն այդ դէպքում են մարշերը, կամ թէկուզ դեմարշերը, իրենցից ինչ որ բան ներկայացնում. արժէք ունեն այն մարշերն ու դեմարշները, որոնց հեղինակ իշխանութիւն համար «վաղուայ օրուայ հանդէպ հաւատի» աղբիւրը սեփական երկրի քաղաքացին է, նրա կարծիքը, նրա ձայնը, նրա քուէն, ոչ թէ Մոսկուայ կատարած աշխատանքային այցելութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

**ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍԱՐԳՍԵԱՆ-ԱԼԻԵՒ ՄԻՋԵՒ ՄՊԱՍՈՒՈՂ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ՉԿԱՅԱՑԱԻ**



**Աստանայի մէջ տեղի ունեցող ԵԱՀԿ-ի անդամ երկիրներու գագաթի ժողովի ընթացքին Սարգսեան եւ Ալիեւ կը գլխաւորեն Հայաստանի եւ Ատրպեյճանի պատուիրակութիւնները**

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն վերջին պահին հրաժարուել է հանդիպել Հայաստանի ու Ռուսաստանի նախագահների հետ, քանի որ չի կարողացել բացատրութիւն գտնել Աստանայում հրապարակուած հնգադրամ յայտարարութեան եւ զագաթնաժողովում հնչեցրած իր ելոյթի մէջ ներառուած տեսակէտների տարբերութեան համար:

Աստանայում, որտեղ մեկնարկել է ԵԱՀԿ-ի զագաթնաժողովը, Չորեքշաբթի, Դեկտեմբեր 1-ին յայտարարութիւն է ընդունուել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ, որի տակ ստորագրել են ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համախաղաղ երկրների պատուիրակութիւնների ղեկավարները՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը, Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնը եւ Միացեալ Նահանգների պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, ինչպէս նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Յայտարարութեամբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները վերահաստատել են իրենց

յանձնառութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հարցում վերջնական կարգաւորման հասնել՝ հիմնուելով միջազգային իրաւունքի սկզբունքների եւ նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրութեան, Հելսինքեան եզրափակիչ ակտի, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի՝ 2009 թուականի Յունիսի 10-ին Ակվիլիայում եւ 2010 թուականի Յունիսի 26-ին Մոսկուայում ընդունած յայտարարութիւնների վրայ:

Միւս կողմից ժամանակ, Աստանայի զագաթնաժողովում հնչեցրած իր ելոյթում Ադրբեջանի նախագահը Հայաստանին մեղադրել է պատերազմական «յանցագործութիւնների» մէջ, եւ պնդել է, որ Հայաստանը «գորավարժութիւններ անցկացնելով օկուպացուած տարածքներում, փորձելով քաղաքների եւ գիւղերի անուանումները եւ անօրինակ կերպով բնակեցնելով օկուպացուած տարածքները, փորձում է իմաստազրկել խաղաղ բանակցային գործընթացը»:

**«ԶԱՅԱՍԱՆ» ԶԻՄԱԴԻԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ**

**Շարունակուած էջ 1-էն**

հիմնադրամի 20 տեղական մարմիններու կողմէ արդէն իսկ կազմակերպուած տարբեր դրամահաւաք միջոցառումներու արդիւնքները. «Այսինքն՝ այդ բոլոր գումարները տարուակ ընթացքին գալիս են համալրելու հեռուստամարաթոնի արդիւնքը», ըսաւ Յասմիկ Գրիգորեան:

Այն հարցին, թէ Հիմնադրամին տրուած խոստումներու որքանը սովորաբար իրականութիւն կը

դառնայ, Յասմիկ Գրիգորեան իբրեւ օրինակ բերաւ անցեալ տարուայ թեթեմի եւ այլ միջոցառումներու ընթացքին ստացուած պատկերը. «Այս պահի դրութեամբ, ես գիտեմ, որ 90-ից աւելի տոկոսով նուիրատուութեան խոստումները իրականութիւն են դարձել», ըսաւ ան:

Իր գործունէութեան 16 տարիներու ընթացքին «Հայաստան» համահայկական հիմնադրամը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ իրականացուցած է մօտ 200 միլիոն տոլարի ծրագիրներ:

**ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐԸ ԶԱՅՐՈՅԹ ՅԱՅՏԱՍԾ Է**

**Շարունակուած էջ 1-էն**

նակ Արմէն Արզումանեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին հրաժարած է մեկնաբանել Հայաստանին առնչուող բացառացիութիւնները:

«Ես ձեռնագրեմ եմ մտում այլ երկրի ներքին գաղտնի փաստաթղթերի վերաբերեալ մեկնաբանութիւններից», - ըսած է Արզումանեան:

Գաղտնի փաստաթուղթի հրապարակման առթիւ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու ղեկավարուած հանդէս եկած է յայտարարութեամբ մը, սակայն առանց հերքելու անոր բովանդակութիւնը: «Ուրիշ իրար» կողմէ կատարուածը նկատուելով վնասակար, Դեպքանատանը մտավախութիւն կը յայտնէ որ հետեւանքները կրնան վտանգի ենթարկել կարգ մը անհատներու կեանքը:

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ՊԱՏԳԱՄԱԻՈՐ ՍԵՊՈՒՅ ԳԱԼՓԱՔԵԱՆ.

ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՉԳՐՈՒԱԾ ՈՒՐԻՇ ԲԱՆԵՐ ԿԱՆ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ՈՉ ՈՔ ՉԻ ԽՕՍՈՒՄ

Թուրքիայի վարչապետ Ռե- ջեփ Թայիփ Էրտողանի՝ Լիբանան կատարած այցի եւ հայ-թրքական գործընթացի վերաբերեալ NEWS.am-ը գրուցել է Լիբանանի խորհրդարանի անդամ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցու- թեան Կեդրոնական վարչութեան փոխատենապետ Սեպուհ Գալփաք- եանի հետ:



- Պարոմ Գալփաքեան, որպէս լիբանանահայ համայնքի ներկայա- ցուցիչ ինչպէ՛ս էք գնահատում Թուրքիայի վարչապետի այցը Լի- բանան:

- Թուրքիայի վարչապետի այ- ցը երկու կողմ ունի: Եթէ նրա այցելութիւնը դիտարկենք գուտ լիբանանեան մակարդակով, այն կա- րելի է որակել բաւական յաջող- ուած: Իր այցելութեան ընթացքում էրտողանը շատ չափաւոր արտա- յայտութիւններ արեց, եւ առիթը բաց չէր թողնում ամէն տեղ յայտա- րարելու, որ Թուրքիան պէտք է ձեռք մեկնի Լիբանանին եւ աջակցի այդ երկրին լուծել իր խնդիրները: Իր այցի ընթացքում էրտողանը հասցրեց մէկ դպրոցի եւ հիւանդա- նոցի բացում կատարել, որոնք կա- ուուցուել էին թրքական կուսովա- րութեան միջոցներով: Ստորագր- ուեցին նաեւ մի քանի պայմանագ- րեր:

նանին եւ նաեւ համայն աշխարհին յիշեցնելն էր, որ Թուրքիայի վար- չապետը չի կարող իր մէկ այցելու- թեամբ մոռացութեան տալ լիբա- նանցիների, այդ թւում եւ լիբանա- նահայերի խնդիրները, եւ մենք պէտք է շարունակենք Հայ դատի հետապնդումը:

Դուք գիտէք, որ Թուրքիան ներկայումս մեծ կապեր ունի Սիր- իայի, Իրանի, Լիբանանի հետ եւ այս երեք երկրները միշտ յարգել եւ յարգում են հայ ժողովրդին եւ ոչ մի առիթ բաց չեն թողնում մեր ժո- ղովրդի մասին դրուատանքի խօս- քեր հնչեցնել: Ես Թուրքիայի վար- չապետի այցի ընթացքում կոչ ուղ- դեցի այդ երեք երկրներին՝ օգտա- գործել իրենց կապերը եւ փորձել համոզել թրքական պետութեանը՝ գալ եւ ներողութիւն խնդրել հայ ժողովրդից, որպէսզի քանդուի պա- տը, որպէսզի կարողանանք փակել պատմութեան մի էջը եւ նորը բացենք: Եթէ այդ պետութիւնների ղեկավարները կարող են միջամտել ի նպաստ հայերի, թող անեն այդ աշխատանքը, մենք միայն շնորհա- կալ կը լինենք նրանցից:

Այս ամէնից գատ լիբանանա- հայութիւնը բաւական դժուար օրեր անցկացրեց այս ընթացքում՝ մի կողմից, որպէս լիբանանցի, միւս կողմից՝ որպէս ազգութեամբ հայ: Ամէն ոք չէ, որ մեր ցուցաբերած կեցուածքը պիտի դրական լույսի ներքոյ ընկալէր: Չէ՛ որ Լիբանանն այսօր ճակատագրական օրեր է ապ- րում, եւ հայ համայնքի պահանջա- տիրական ակտերը՝ բողոքի ակցիա- ները շատերը ճիշտ չընկալեցին եւ ասացին՝ կողմնորոշուէ՞ք՝ դուք հա՞յ էք, թէ՛ լիբանանցի: Բայց նաեւ գտնուեցին ուժեր, որոնք մեզ աջակ- ցեցին: Տեղի ունեցաւ նաեւ մի աննախադէպ երեւոյթ. երեք աւան- դական կուսակցութիւններով էր- տողանի այցին ընդունալ պատասա- ներ էինք փակցրել Լիբանանի կենտ- րոնական փողոցներում, որոնց վրայ գրուած էր, որ հայութիւնը պահան- ջատէր է Հայ դատի արդար լուծմա- նը, որը մինչ այժմ պղծուած է: Սակայն այցից մէկ օր առաջ՝ գիշե- րը, Լիբանանի ապահովական ուժե- րը հաւաքել էին այդ պատասաները: Մինչ այդ էլ ամէն տարի՝ Ապրիլի 24-ին մենք նմանատիպ բովանդա- կութեամբ պատասաններ ենք փակց- նում, սակայն սա առաջին դէպքն էր, որ լիբանանեան իշխանութիւնների միջամտութեամբ փակցուած պա- տասանները հանուեցին: Ինչեւէ, մեր բողոքի ակցիայի նպատակը Լիբա-

- Թուրքիան ի դէմ իր առաջին դէմքերի, վերջերս յաճախ է հանդէս գալիս Հայաստանին եւ հայութեան ուղղուած գովեստի խօսքերով: Լա- խօթին է Եւրոպայի այսուրեւ Թուրք- իայի նախագահ Կիլիլ յայտարարեց, թէ իրենք վճռական են հայ-թրքական արձանագրութիւնները կեանքի կոչե- լու հարցում եւ գործընթացի յաջող եզրափակման համար ակնկալում են, որ «ՀՀ նախագահը կը շարունակի պահպանել միմէն օրս ցուցադրած իր առաջնորդի եւ պետական գործչի գործելաճո՞ր»: Ի՞նչ է հետեւում Թուրք- իայի այս պահուածքից:

- Կեանքը ցոյց տուեց, որ հայ- թրքական գործընթացը մնաց թղթի վրայ, իսկ հայ-թրքական արձա- նագրութիւնները չարժանացան հա- մայն հայութեան «այո»-ին: Իսկ երբ չկայ համազգային համաձայ- նութիւն, պետութիւնը չի կարող

ինքնագործունէութեամբ զբաղուել: Նոյն իրավիճակն է նաեւ Թուրքիա- յում, որտեղ եւս հայ-թրքական արձանագրութիւնների ստորագրու- մից յետոյ իրավիճակը հանգիստ չէր: Թուրքիան նոր քաղաքականու- թիւն է որդեգրել եւ փորձում է իր հարեւանների հետ հարթել կոնֆ- լիկտները: Այդ նպատակով էլ կարող- ղացաւ լուծել իր խնդիրները Սիր- իայի հետ, Լիբանանի եւ Իրանի հետ յարաբերութիւնների նոր էջ բացեց: Թուրքիան վստահաբար փափաքում է նաեւ հաշտ ու խաղաղ յարաբերու- թիւններ հաստատել Հայաստանի հետ՝ թէկուզ եւ Եւրոպայի աչքին լաւ երեւալու համար, սակայն ինչ- որ բան խանգարում է:

- Իսկ ի՞նչն է խանգարում, մանա- ւանդ որ կան այդ յարաբերութիւնները երաշխաւորող արձանագրութիւններ:

- Ես էլ եմ ուզում այդ հարցը տալ, ինչո՞ւ ստուգուեց այդ արձա- նագրութիւնների վաւերացումը, ո՞վ է խանգարում եւ ի՞նչը փոխուեց, որ դա տեղի չունեցաւ: Բայց այս հարցերի պատասխանները պէտք է մեզ տայ Հայաստանի նախագահը: Մենք ունենք դրա պատասխանը, սկզբից աւոււն էր, որ արցախեան խնդիրն է, որ խանգարում է արձա- նագրութիւնների ստորագրումը: Կարծում եմ, որ Թուրքիան ակնկա- ւում էր, որ արձանագրութիւնների միջոցով կը ստանայ ԼՂ հարցում գիշումներ եւ այդ ձեւով Աստուծոյ ճանին կը հանգստացնի: Հիմա՝ Հայաստանի նախագահը պէտք է լոյս սփռի հայ-թրքական գործըն- թացի մոլթ կողմերի վրայ եւ բացատրի՝ ինչո՞ւ այսպէս եղաւ:

Ի՞նչն է փոխուել, որ այժմ Թուրքիան կրկին գործակցութեան կոչ է անում Հայաստանի իշխանու- թիւններին: Մեր կասկածն այն է, որ Հայաստանից գիշում է պա- հանջուում Արցախի հարցում: Իսկ Հայաստանը գտնուում է ծանր վի- ճակում, քանի որ գիշումը պէտք է անի արցախցին: Այդ պարագայում էլ դժուարութիւններ են ի յայտ գալու, քանի որ տարակարծութիւն է առաջանալու Արցախի եւ Հայաս-

տանի իշխանութիւնների միջեւ: Բայց եթէ անգամ ԼՂ հարցի լուծու- մից յետոյ կեանքի կոչուեն արձա- նագրութիւնները, մեզ համար դա անընդունելի կը լինի՝ դրանցում առկայ մի քանի կէտերի պատճա- ուով, մասնաւորապէս պատմաբան- ների յանձնախմբի ձեւաւորման մա- սին է խօսքը: Հայաստանի իշխա- նութիւններն այսպիսով անտեսում են սփիւռքի՝ 98 տարիների ընթաց- քում գործադրած ջանքերը եւ մեր վրայով անցնելով փորձում են կոմպ- րոմիսի գնալ Թուրքիայի հետ: Սա վիրաւորանք է սփիւռքի, մասնաւո- րապէս հայ աւանդական կուսակ- ցութիւնների հանդէպ:

- Հայ-թրքական արձանագրու- քիւնների ստորագումից առաջ Սերժ Սարգսեանը համահայկական շրջա- գայութիւն իրականացրեց՝ համոզե- լու հայութեանը, որ արձանագրու- քիւններում հակահայկական դրոյթ- ներ չկան: Ի՞նչ էր կարծում, չարժ՞, որ նման մի շրջագայութիւն էլ հիմա անցկացնի եւ բացատրի հայութե- անը, թէ ինչո՞ւ Հայաստանն առկախեց արձանագրութիւնների վաւերացումը: Գուցէ դուք նման պահանջո՞վ հանդէս գաք:

- Երբ զգացուի, որ վերստին աշխատանքներ են տարւում հայ- թրքական արձանագրութիւնների գործադրման ուղղութեամբ, վստահ եղէք, որ առաջին ռեակցիան ի յայտ է գալու Լիբանանից: Հայաս- տանի նախագահը մի անգամ արդէն եղաւ սփիւռքում, շօշափեց հայ գաղութների տրամադրութիւննե- րը եւ տեսաւ, թէ ինչպիսի մերժում կայ արձանագրութիւնների հան- դէպ: Նա մեզ բացատրում էր, որ պէտք է արձանագրութիւնների կեան- քի կոչումը հեզասահ ընթանայ, սակայն կեանքը հակառակը ցոյց տուեց: Այդ արձանագրութիւննե- րում վստահաբար չգրուած ուրիշ բաներ կան, որոնց մասին ոչ ոք չի խօսում: Եւ այդ ուրիշ բաների համար է, որ յետաձգուում է դրանց գործադրումը:

ԶՐՈՒՑՅԵՑ ՀԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ

Advertisement for Dr. Missak Ekmekdjian and Dr. Anahid Ekmekdjian, Chiropractors. Includes address (833 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202), phone number (818) 240-0065, and a photo of a human spine.

Advertisement for Anthem Blue Cross insurance agent Bedros S. Maronian. Includes Anthem logo, Blue Cross logo, agent name and phone number (818-500-9585), and a cartoon illustration of the agent.

# ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅ ԿԵԱՆՔ

## ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԽԻԹԵԱՆ

1975-էն դէպի 1990 երկարող տասնը՛հինգ տարի տեւող Լիբանանի քաղաքացիական պատերազմը աննկարագրելի էլ եւ անմարդկային ոճիքներ, արեւանգումներ եւ աւերներ գործեց: Հարիւր հազարներ մահացան եւ անհետացան: Միլիոնէ աւելի մարդիկ տեղահանուեցան կամ երկրէն հեռացան: Հեռացաւ նաեւ Լիբանանահայութեան մեծ մասը թողնելով հայութեան երկրորդ հայրենիք կոչուող Լիբանանը:

Լիբանան դարձաւ ամէն տեսակի Anarchist արտադրող կամ ներածող երկիր:

Չափաւոր նկատուող Լիբանանցի քաղաքագէտներ, մեծ պետութիւններէն պարտազին ինդոնեզի մարել Լիբանանի կրակը, որ պէսզի ան աշխարհը իր կրակով չայրէր կամ չկլանէր: Մտիկ ընտղ չեղաւ, որովհետեւ Լիբանանի դրացիները, եւ անոնց բարեկամ մեծերը, հաշիւներ ունէին իրագործելիք: Այդ հաշիւներուն մինչեւ իրագործուելը սակայն, աւա՛ղ, անհանդարտ Լիբանանի քաղաքացիական պատերազմի դարձող դասընթացքներէն շրջանաւարտներ կամ այլազան երկիրներու հետեւորդներ ու շահագործող ուժեր, Terrorism կոչուող ախտով մարդկութեան մարմինը թունաւորեցին.

Լիբանանի քաղաքացիական պատերազմը վերջ գտաւ երբ Իսրայէլ:

- Վերջ դրած էր Պաղեստինեան գինեալ ներկայութեան.

- Վերջ դրած էր իր երազին, Եգիպտոսի Սատաթի օրինակով, Լիբանանի հետ հաշտութեան դաշինք կնքելէ, իր կողմէ բերուած երկու նախագահներ ժրմայէլ եղբայրներու իշխանութեան շրջանին.

- Եւ, անվտանգութիւնը ապահոված ըլլալ կը կարծէր կամ կը յուսար իր Հիւսիսային սահմաններուն, տասը քիլոմէթր լայնքով Լիբանանի հարաւը գրաւելով, եւ հոն իրեն դաշնակից՝ Սատտ Հատտաթի ընթացքը հաստատելով:

Սուրիան ալ, տարբեր հաշիւներ ապահոված ըլլալով.

- Իրմէ «խլուած եւ անջատուած» Լիբանանը իր բացարձակ ազդեցութեան տակ առնելու իրաւունք կը ստանար.

- Վերջ կը դնէր միլիշիաներու եւ սանձարգակ գործող ուժերու անիշխանութեան որոնք կ'անհանգստացնէին նախ եւ առաջ գինք, յետոյ Լիբանանը, Արաբական աշխարհն ու Արեւմուտքը:

- Եւ, Հրզպալլան կը պահէր Հարաւի մէջ, որպէս միակ գինեալ ուժ, Լիբանանի Հարաւի գրաւեալ շրջանի ազատագրումի գործը վստահելով անոր, եւ ԿՈՂԱՆ-ի վերադարձը անոր պայքարին հետ կապելով:

Այս բոլորը կարելի կը դառնար Պաղ պատերազմի (1947-1990) վերջաւորութեան եւ Սովետ Միութեան փլուզումի նախօրեակին, աշխարհը դնելով Ամերիկեան բացարձակ տիրապետութեան տակ:

Հոկտեմբեր 1989-ին, Լիբանանի բոլոր ուժերը ներկայացնող անձնաւորութիւններ, ի բացառեալ այն առնչուող իշխանազուլի Չօր. Միշէլ Աուն-ի որ կ'ընդդիմանար Սուրիոյ տրուած մանտային, կը հաւաքուէին Սէուտիէի Թալէֆ քաղաքին մէջ, ու կը կնքէին նոր

Ազգային Ուխտ եւ Նոր Սահմանադրութիւն: Մարտիթ նախագահէն կ'առնուէր իրաւունքը վարչապետ նշանակելու եւ Փարլամենդ լուծելու, եւ վեցով-հինգ (6/5) ի նպաստ քրիստոնեաներուն տրուած առաւելութիւնը Փարլամենթի մէջ կը դառնար հաւասարութիւն հինգով-հինգ, Իսլամ համայնքը գոհացնելու համար:

Նոյեմբեր 5-ին, նախագահ կ'ընտրուէր մարտունակ Զդարթալի երկար տարիներու պետական երեսփոխան եւ նախարար Ռընէ Մուաւատ, որ 17 օր ետք, Լիբանանի անկախութեան օրը՝ Նոյեմբեր 22-ին, կը սպաննուէր ահաւոր ռումբի պայթումով: Անոր կը յաջորդէր, Սուրիոյ մօտիկ՝ Զահլէ քաղաքէն, պետական երեսփոխան Էլիաս Հըրաուի նախագահ ընտրութիւնը, որ կը տեւէր, երկարացումով, (6 + 3) ամբողջ 9 տարի, եւ Զօր. Աուն բռնի կը հեռացուէր Սուրիական ուժերու կողմէ՝ Սեպտեմբեր 1990-ին: (Հոս տեղին է յիշել թէ 1958-ի դէպքերը (Մայիս-Սեպտեմբեր) Նախագահ Քամիլ Շամուն-ի վերընտրութիւնը ձախողեցուց Նասիբի համակիր ուժերու կողմէ):

1990-1992 երկու տարի տեւող, Օմար Քարամէի եւ Րաշիտ Սուլհի վարչապետութիւններէն ետք, 1992-ին, Սէուտիէյի բարեկամ, Սայտա քաղաք ծնած, Միւննի համայնքէն, մեծահարուստ Րաֆիք Հարիրիի կը յանձնուէր Վարչապետի պաշտօնը եւ Լիբանանի տնտեսական բաժնի վերելքը կը վստահուէր իրեն, միշտ Սուրիոյ թողնելով ապահովութիւնը ամրապնդելու եւ քաղաքական նշանակումներ ընելու բացարձակ իրաւասութիւնը:

Եւ այսպէս, մինչ Հարիրի կը հոգար երկրի տնտեսական եւ շինարարական պէտքերը, Սուրիոյ կողմէ «նշանակուած» նախագահներ՝ Էլիաս Հըրաուի (1989-1998) եւ Էմիլ Լահուա (1998-2007), կը ստանձնէին՝ կամայ թէ ակամայ, Սուրիոյ դիրքն ու գրաւումը ամրապնդող որոշումներուն գործադրութիւնը:

Տասնը՛հինգ տարուան պատերազմէն ետք (1975-1990), Լիբանան ունեցաւ տասնը՛հինգ տարուայ (990-2005) ապահով կեանք եւ դրամանիշը (լիբան) կայունացաւ շնորհիւ Հարիրիի դիրքին եւ միջազգային կապերուն:

Պէյրութի աւերակ դարձած կեդրոնը արդիական կերպարով վերաշինուեցաւ:

Եւ ամէն Լիբանանցի աւատապետ կամ ազդեցիկ նկատուող դէմք Սուրիոյ ճամբան բռնած Դամասկոս գնաց հաւատարմագիր յանձնելու:

The US diplomats' verdict on the NATO partner with the second biggest army in the alliance is devastating. The Turkish leadership is depicted as divided, and Erdogan's advisers, as well as Foreign Minister Ahmet Davutoglu, are portrayed as having little understanding of politics beyond Ankara.

The Americans are also worried about Davutoglu's alleged neo-Ottoman visions. A high-ranking government adviser warned in discussions, quoted by the US diplomats, that Davutoglu would use his Islamist influence on Erdogan, describing him as "exceptionally dangerous." According to the US document, another adviser to the ruling AK Party remarked, probably ironically, that Turkey wanted "to take back Andalusia and avenge the defeat at the siege of Vienna in 1683."

The US diplomats write that many leading figures in the AK Party were members of a Muslim fraternity and that Erdogan had appointed Islamist bankers to influential positions. He gets his information almost exclusively from newspapers with close links to Islamists, they reported. The prime minister, the cables continue, has surrounded himself with an "iron ring of

sycophantic (but contemptuous) advisors" and presents himself as the "Tribune of Anatolia."

UK's The Guardian, in leaked documents published on late Sunday said, in a tense conversation, a senior US envoy presses Turkish officials to support US-led action to convince the Iranian government that it is on the wrong course. The Turks insist their mediation efforts are the best way forward but are forced to concede that most countries in the region see Iran as a threat.

According to the daily, the great Iranian-American struggle for control and influence in the Middle East is far from over – and may in fact be hotting up – and it was made plain again when US under-secretary William Burns held yet another meeting with the reluctant Turks in Ankara in February 2010. Burns insists Washington would prefer a negotiated settlement with Iran. Then, like Gates, he uses the spectre of an Israeli military attack to dramatise his arguments and unsettle the Turks.

"Burns strongly urged [Turkish foreign ministry under-secretary Feridun] Sinirlioglu to support action to convince the Iranian government it is on the wrong course. Sinirlioglu reaffirmed the GoT's [government of Turkey] opposition to a nuclear Iran; however, he registered fear about the collateral impact military action might have on Turkey and contended sanctions would unite Iranians behind the regime and harm the opposition.

"Burns acknowledged Turkey's exposure to the economic effects of sanctions as a neighbour to Iran, but reminded Sinirlioglu Turkish interests would suffer if Israel were to act militarily to forestall Iran's acquisition of nuclear weapons or if Egypt and Saudi Arabia were to seek nuclear arsenals of their own. 'We'll keep the door open to engagement,' he [Burns] stressed."

And for once, it appears he has made some headway, the Guardian interpreted. "A visibly disheartened Sinirlioglu conceded a unified message is important. He acknowledged the countries of the region perceive Iran as a growing threat: 'Alarm bells are ringing even in Damascus.'" "

The report also said in Nov. 2009 that Davutoglu reportedly told US envoy Phillip Gordon that Iran cannot be bullied into compliance with western demands.

According to The Guardian, when Gordon says Ankara should send a stern public message to Tehran about the consequences of ignoring UN resolutions, Davutoglu replies that [Turkish prime minister Recep Tayyip] Erdogan made just such a statement during a recent visit to Tehran. "Only Turkey can speak bluntly and critically to the Iranians, Davutoglu contended, but only because Ankara is showing public messages of friendship."

The exchange continues: "Not-

## US Fury at Armenia Over Arms Transfers to Iran

Continued from page 1

ment with the Americans is not clear. Sarkisian's office on Monday refused to comment on this.

### U.S. Embassy in Armenia Issues Statement

The U.S. embassy in Armenia issued a statement regarding Wikileaks. The statement reads as follows:

"Regarding recent news reports concerning documents purportedly downloaded from U.S. Defense Department computers, the Department of State does not comment on materials, including classified documents, which may have been leaked.

Any unauthorized disclosure of classified information by Wikileaks has harmful implications for the lives of

identified individuals that are jeopardized, but also for global engagement among and between nations. Given its potential impact, we condemn such unauthorized disclosures and are taking every step to prevent future security breaches.

While we cannot speak to the authenticity of any documents provided to the press, we can speak to the diplomatic community's practice of cable writing. Cables reflect the internal day to day analysis and candid assessments that feed the governments' foreign relations deliberations. These cables are often preliminary and incomplete expressions of foreign policy, and they should not be seen as having standing on their own or as representing U.S. policy," the press service of the U.S. Embassy in Armenia reported.

## Lebanese Armenians Protest

Continued from page 1

in the face of Lebanon's interests, whether in terms of the country's relations with Turkey or any other interest.

"The community is committed to its historic stance," he added.

For his part, Armenian Orthodox Archbishop in Lebanon Kegham

Khatcherian warned Lebanon and the Arab world against surrendering their leadership to foreign powers, saying "we are protesting in Martyrs Square not against an official visit or against an agreement, but to prove to this visitor [Erdogan] and to the entire world that we will not keep quiet about our inherited right."

## No Karabakh Deal Reached At OSCE Summit

Continued from page 1

nance." The proposed peace framework also envisages that Karabakh's final status, the main bone of contention, would be determined through "a legally binding expression of will."

The mediators and Medvedev in particular hoped that Aliyev and Sarkisian will overcome their disagreements over key details of the proposed settlement in time for the Astana summit. However, the content of the five-party statement suggests that they failed to do that.

Contrary to expectations, Aliyev and Sarkisian did not even meet at Astana. An Armenian diplomatic source, who asked not to be identified,

told RFE/RL's Armenian service that the Azerbaijani leader cancelled his planned talks with Sarkisian and Medvedev "at the last minute."

The source claimed that Aliyev did so because of "glaring contradictions" between the text of the five-party statement and his speech at the summit delivered later in the day.

In that speech, Aliyev lashed out at Armenia, again stating that it is seeking to prolong the Karabakh status quo and to turn peace talks organized by the Minsk Group co-chairs into a "meaningless process." He also accused the Armenians of committing "war crimes and a genocide" against Karabakh's Azerbaijani population during the 1991-1994 war.

## More Wikileaks Documents

Continued from page 3

ing that Davutoglu had only addressed the negative consequences of sanctions or the use of military force, Gordon pressed Davutoglu on Ankara's assessment of the consequences if Iran gets a nuclear weapon. Davutoglu gave a spirited

reply, that 'of course' Turkey was aware of this risk. 'This is precisely why Turkey is working so hard with the Iranians.' "

Turkish Foreign Minister Ahmet Davutoglu is currently on a visit in Washington and is supposed to have a meeting with the American diplomats questioning his credibility.

# ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.



Հայ news.am

## Effective Leadership and Worldwide Structure

Continued from page 2

Citing similar attempts and resolutions made in 1979, 1980, 1983 and 1985 which bore no fruit due to the disagreements and infighting among the participating Diaspora organizations, Dr Marshlian affirmed that the Armenian Diaspora badly needs a democratic, legitimate and organized body that would be beneficial to Armenia and would strive to safeguard the Armenian language and geopolitical standing. The traditional political parties and organizations are hesitant to advance such ideas, because their motto announces: We already strive to that end, and you can join us if you want. He also pointed out that the creation of an Armenian World Congress would secure the unity of the Diaspora under one umbrella, whose existence constitutes an important factor for the future strengthening and survival of Armenia.

10. Dr Stephan Astourian, University of California, Berkeley: The Traditional Armenian Parties and the Problem of Pan-Armenian Coordination

Dr Astourian presented an interesting report on the cultural and benevolent activities of the traditional Diaspora political parties and other organizations inside the Diaspora Armenian life, subjecting them all without exception to a critical assessment. He gave an account of their national activities aimed at safeguarding the nation, the

Armenian language and schools; however, he concluded with a negative appraisal of the position, number and significance of the role they play within the Diaspora Armenians. He also outlined the stance of the three traditional political parties of the Diaspora toward the state of Soviet Armenia in the past and that of the present independent Armenia. As always at similar past presentations, the stated purpose of Dr Astourian's conclusions was meant to reflect national political, economic, social and geopolitical realities based on available statistical sources, and not personal judgments.

11. Dr Nyree Derderian, Stanford University: Models and Modalities of

Creating a Trans-Diaspora Framework

Dr Derderian started by depicting the overall image of the Diaspora Armenian as discordant and inharmonious in common collaborative ventures. In contrast, she brought forth the example of a Jewish organization that succeeded in founding an international united body of 500 members as constituted by delegates from the U.S., Israel, and worldwide, with the aim of helping and safeguarding Israel. She noted that such organizations can be found among various nations like the Greeks for example, who can be taken as paradigms to learn from.

12. Dr Richard Hrair Dekmejian, USC: Concluding Thoughts

Dr Dekmejian summed up the seminar's discussions in the quest for setting up an elective leadership and a viable worldwide structure to help the Armenian Diaspora face the present and coming challenges to their well-being and survival. The contents of the deliberations in the seminars will be published in due course and will be available to the public

\*\*\*\*\*

The author would like to express his appreciation for the high academic quality of the International Symposium on The Armenian Diaspora: Elective Leadership & Worldwide Structure organized by the USC Institute of Armenian Studies, and personally to Dr Dekmejian. At this time, we will refrain from comments and the expression of personal opinions on the overall initiative, the subjects presented, the issues raised and the stands taken. We will do so after a thorough review, once all the printed materials are made available in an intelligently usable format.

IMPORTANT NOTE:—For reasons beyond my control, I had to leave the symposium rather early, missing the valuable talks by Drs Marshlian, Astourian, Dekmejian and Derderian at the end of the day. I wish to express my sincere appreciation to my longtime friend and the chief editor of Nor Or Weekly for the notes graciously and promptly provided by him so that I could make this report as comprehensive as possible.



Communities that vote are communities that government listens to. If we do not vote, our voices are not heard. If we want Armenians to have authority in how decisions are made involving our community, we must vote.

Make your voice heard. Exercise your right. Register to vote today!

Register to vote and make some phone calls for Khatchik Chahinian, who is running for Pasadena City Council - District 4.

Together we can do it.

**IMPORTANT VOTER DEADLINES TO REMEMBER:**

Fri., Feb. 18: Last Day to Mail New Voter Registration Applications

Tue., Feb. 22, 5PM: Last Day L.A. County Registrar accepts Walk-In New Voter Registration

Wed., Jan. 12, 6:30 - 8:30PM: Pasadena Citywide Candidate Forum of City Council and School Board Location: La Salle High School, 3880 E. Sierra Madre Blvd., Pasadena

Tue., March 8, 7AM - 8PM: Pasadena City Council and School Board Elections

### ԱՐԺԵՆԹԻՆԱՅԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԳԱՅԱՆԷ» ՊԱՐԱՆՈՒՄԲԸ 50 ՏԱՐԻ ԾԱՓԱՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱԿ



Նոյեմբերի 9-ին Պուէնոս Այրեսի «Նասիոնալ» թատրոնի յարմարաւէտ դահլիճում, մօտ 1100 հանդիսատեսների հետ միասին, Արժենթինահայ Մշակութային Միութեան «Գայանէ» պարախումբը տօնական համերգով նշեց իր կէսդարեայ յոբելեանը:

Դժուար է ասել, թէ դահլիճում արդեօք յուզմունքն էր գերիշխում, թէ՞ հիացմունքը: 50 տարի օտար ափերին, մայրենի հող ու ջրից այսքան հեռու, կարողանալ այսպէս պահել հայ ոգին, կարողանալ փոխանցել այն յաջորդ սերունդներին ու կարողանալ իր շարքերը գրաւել նոյնիսկ օտարների դիւրին չէ, սակայն «Գայանէ» կարողացել է ու այս տարի մի շարք միջոցառումներով նշում է իր 50-ամեակը, իր կազմում ունենալով հիմնական եւ մանկական խմբերի 6-ից մինչեւ 32 տարեկան 90-ից ավելի անդամների, որոնց, յիշելով իրենց երիտասարդութիւնն ու չկարողանալով գապել ներքին մղումը, յաճախ, ինչպէս այդ պատահեց Նոյեմբերի 9-ին, միանում են «Գայանէ»-ի վետերանները՝ առաջին սերնդի ներկայացուցիչները: Ու ոչինչ, որ նրանցից ոմանք արդեն պապիկներ ու տատիկներ են, ոմանք արդեն չունեն երիտասարդ տարիների ճկունութիւնը, ոչինչ, որ մագբերը, եթէ դեռ կան, արդեն ճերմակում են, Նոյեմբերի 9-ին նրանք նորից բեմի վրայ էին, պարում էին իրենց գաւակների հետ ուսուսի, նոյն աւիւնով ու ոգով, խորիստ կեցողութեամբ ու երջանկութիւնից փայլող ժպիտները դեմքերին՝ բուռն ծափահարութիւններ պոկելով հիացած հանդիսատեսներից:

Խորհրդանշական է, որ այս յոբելեանական համերգում առաջին անգամ հիմնական խմբի շարքերում բեմ դուրս եկան նաեւ մանկական խմբի չորս անդամներ, որոնք մեծացել են, առնականացել ու հասակով արդէն հաւասարուել մեծերին:

Սկսւում է հերթական սերնդափոխութիւնը...

Հանդիսատեսները երկար ծափահարեցին նաեւ «Գայանէի» առաջին գեղարուեստական ղեկավար եւ պարուստց Ռոզա Չաքեջեանին, նրան փոխարինած Միրտա Վարդանեանին ու ներկայ պարուստց Ալիսիա Անդրէասեանին, որոնց, ի նշան երախտագիտութեան, շքեղ ծաղկեփնջեր յանձնուեցին Հայ Մշակութային Միութեան կողմից:

50 երկար ու ձիգ տարիներ: Երեք սերունդ ու նաեւ երեք ղեկավար ու պարուստց, որոնք իրենց եռանդն ու ժամանակը չեն խնայել,

եղել են «Գայանէ»-ի կազմում, դուրս են եկել հենց «Գայանէ»-ի ծոցից, աճել նրա հետ, մեկնել Հայաստան ու կատարելագործուել Երեւանի Պարարուեստի ուսումնարանում: Վերադարձել են հայրենիքի բոլորով ու գոյներով հարստացած ու այդ ամէնը փոխանցել խմբին: Ուրեմն, պատահական չէ «Գայանէ»-ի յաջողութիւնը, պատահական չէ հանդիսատեսի սէրն ու հաւատարմութիւնը, հանդիսատես, որ միշտ լցնում է դահլիճը, որքան էլ որ այն մեծ լինի: Ի դէպ նշենք, որ Ռոզա Չաքեջեանն առաջինն էր Հարաւային Ամերիկայից, որ 1959 թուականի մեկնել է Հայաստան ուսանելու ու կատարելագործուելու:

Այժմ «Գայանէ» պարախումբը ունի գեղարուեստական խորհուրդ, որի կազմում է Հայաստանի Պարի Պետական համոյթի նախկին անդամ մանստրօ Բաֆֆի Գրիգորեանը եւ պարախմբի երիտասարդ անդամներ Կառլոս Ագաթան, Դանիէլա Ռեյնոնեն, Մարսելա Բոյաջեանն ու Ազուստինա Լոպես Կորվալիան: Հայ Մշակութային Միութիւնը գեղեցիկ ծաղկեփնջերով իր խորին շնորհակալութիւնն արտայայտեց հայ պարի նուիրեալների այս խմբին:

Ուրախութեամբ պէտք է յայտնենք նաեւ, որ ի ճանաչումն 50 տարիների ընթացքում իրականացրած ազգանուէր գործունէութեան եւ Սփիւռքում Հայ մշակութի պահպանման ու տարածման, «Գայանէ» պարախումբն արժանացել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Գարեգին Բ-ի Պատուոգրին եւ պարուստց Ալիսիա Անդրէասեանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Սուրբ Սահակ Սուրբ Մեսրոպ» շքանշանին, որ յոբելեանական համերգից երկու շաբաթ առաջ Պուէնոս Այրեսի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում պարախմբի անդամներին եւ Ալիսիա Անդրէասեանին էր յանձնել Արժենտինայի եւ Չիլիի հայկական համայնքների հոգեւոր հովիւ, Արքեպիսկոպոս Գիսակ Մուրադեանը:

Արժենտինայում Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ ու Լիազօր դեսպան Տիար Վլադիմիր Կարմիրշալեանը Արժենտինահայ Մշակութային Միութեան նախագահ Ադրիան Լոմբոջանին, փոխնախագահ Ադրիան Գասպարեանին եւ «Գայանէ» պարախմբի գեղարուեստական խորհրդի անդամ Դանիէլա Ռեյնոնէին յանձնեց ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կողմից «Գայանէ» պարախմբին հայ

### ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑԱԻ ՄԵԾՆ ՍՈՒՐԱՏԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԸ ԵՒ ՅԱՃՆՈՅ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ԱՄԵԱԿԸ

Հաճնոյ Հերոսամարտի 90-ամեակին առթիւ պատշաճ հանդիսութիւններ տեղի ունեցան սփիւռքի հայաշատ կարգ մը քաղաքներուն մէջ: Մեծագոյն միջոցառումը տեղի ունեցաւ Հայաստանի Նոր Հաճըն քաղաքին մէջ: Այս առթիւ նշուեցաւ նաեւ ազգային անուանի հերոս Մեծն Մուրատի ծննդեան 150-ամեակը: Նշենք նաեւ որ Նոր Հաճըն քաղաքի միջնակարգ դպրոցը կը կրէ Մեծն Մուրատի անունը:

Պանծալի հերոսին անունը կրող դպրոցի սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ ցուցահանդէսի բացումը նուիրուած Մեծն Մուրատի ծննդեան 150-ամեակին: Այցելուները հետաքրքրութեամբ դիտեցին Մեծն Մուրատի եւ հայ ազգային ազատագրական պայքարին նուիրուած նկարներն ու ցուցանակները:

Մեծն Մուրատի անունան դպրոցի հիմնադրութեան 15-ամեակին Նոր Հաճըն քաղաքի հիմնադրութեան 51րդ տարեդարձին եւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան հիմնադրութեան 100-ամեակի հանդիսութեանց ներկայ գտնուեցան արտասահմանի տարբեր շրջաններէն ժամանած պատուիրակութիւններ եւ անհատներ: Գալիֆորնիոյ պատուիրակութիւնը կը գլխաւորէր տեղոյն Հաճնոյ Հայրենակցական Միութեան ատենապետ՝ Եփրեմ Պաղպուտարեան: Ներկայ էր նաեւ Կոտայքի թեմի առաջնորդ՝ Գերշ. Առաքել Եպս. Մարամեան եւ այլ անձնաւորութիւններ:

Հրապարակային հանդիսութեանց առընթեր տեղի նաեւ հանդիպում-հաւաք Նոր Հաճընի քաղաքապետարանին մէջ, ուր ողջոյնի



խօսքով հանդէս եկաւ քաղաքապետ Գաբրիլ Մաթէոսեան: Հիւրերն այցելեցին նաեւ քաղաքի երաժշտական դպրոցը, ուր իրենց պատուին գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ համերգ մը: Այնուհետեւ, քաղաքի կեդրոնական հրապարակին վրայ տեղի ունեցաւ Հաճնոյ հերոսամարտի 90-ամեակի աւանդական հարիսայի օրհնութիւնը ու բաշխումը որուն մասնակցեցան շուրջ 10,000 հոգի: Այստեղ եւս տեղի ունեցաւ ժողովրդային տօնախմբութիւն եւ տօնական մեծ համերգ, մասնակցութեամբ պարախումբերու եւ անհատ արուեստագէտներու:

Նոր Հաճըն քաղաքի լիշարժան հանդիսութիւններն իրենց աւարտին հասան տօնական հրավառութեամբ:

**A.G.B.U. - A.Y.A**  
**GLENDALE - PASADENA**  
**CHAPTER**

**New Year's Eve Gala**


**Friday, December 31st @ 7:30pm**  
**Catering by "La Fogata"**  
**Entertainment: DJ Extreme Sounds "Stepan"**

**Surprises**  
**RSVP: 626-794-7942**  
**A.G.B.U. PASADENA CENTER**  
**2495 East Mountain St. Pasadena, CA**

**TICKETS: ADULTS - \$100.-**  
**Drinks Included**  
**CHILDREN 4 -12 years old - \$60.-**

# ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԶԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ ԾՆՆԴԵԱՆ 130-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՇՈՎ (1880-1961)

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՀՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ



Ներկայ տարին կը նշէ Երջանկայի շատակ Գարեգին Պատրիարք Խաչատուրեանի (Տրապիզոնի) ծննդեան 130-ամեակը: Իր կեանքի 81 տարիները եղան հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան համընթաց տառապանքի եւ վերագարթօնքի տարիներ երբ Արմաշի միջին սերունդի այս գրագետ եւ վարչագետ հոգեւորականը յանձն առաւ թեմակալ Առաջնորդի այլազան պաշտօններ վարել մինչեւ իր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Աթոռ բարձրանալը 1950 թուականին: Գարեգին Պատրիարք վախճանեցաւ Իսթանպուլի մէջ 1961 թուին, որուն յուղարկաւորութեան եւ վերջին օժման կարգը անձամբ կատարեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգէն Ա. Կ. Պոլիս տուած իր հայրապետական առաջին այցելութեամբ:

### ՆԱԽԸՆՔԱՅՐ

Ծնած Տրապիզոն 1880-ին Գարեգին Խաչատուրեան Արմաշի Դպրեվանք ընդունուեցաւ 1896-ին եւ ուսաւ Եղիշէ Դուրեան Եպիսկոպոսի շուկնին տակ, ըլլալով անոր առաջին ձեռնասուններէն մին: 20-րդ դարու լուսաբացին, 1901 թուականին, տաս ընծայեալներու շարքին ինք եւս Արմաշու Չարխապիան Ս. Աստուածածին վանքին մէջ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ստացաւ նորապսակ Դուրեան Եպիսկոպոսի ձեռամբ: Տասնին մէջ կային Մեսրոպ Նարոյեան, Ղեւոնդ Դուրեան, Արտաւազդ Գալեռտեան, Սահակ Օտապաշեան, Գրիգորիս Պալաբեան, եւ այլ ընտրեալ հոգեւորականներ որոնք իրենց ուսման լրիւ տարիները ծաղկեցուցին ուղղակի Եղիշէ Եպս. Դուրեանի ուսուցչապետութեան ներքեւ:

Գարեգին Վրդ. Խաչատուրեան, ի բնէ հայերէն լեզուի նկատմամբ գիտուն եւ գերգաջուն, եղաւ քարոզիչ, ուսուցիչ եւ տաղանդաւոր գրագետ հոգեւորական մը, որ իր գրական երկերու շարքին յաջողութեամբ աշխարհաբարի թարգմանեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի Մատեան Ողբերգութեան (ՆԱՐԵԿ) Աղօթամատեանը երկու անգամ, մին արձակ եւ միւսը ոտանաւոր, ու եղաւ Արմաշական սերունդի երկրորդ հոգեւորականը որ Նարեկը ծանօթացուց հայ ժողովուրդին իր հասկցած լեզուով: Իրմէ առաջ զայն յաջողութեամբ աշխարհաբարի թարգմանած էր նաեւ իր երէց դպրոցակիցներէն Թորգոմ Եպս. Գուշակեան՝ Գահրէի մէջ: Ի միջի այլոց ան գրեց «Աշխարհի Լոյսն ի Հայս» գիրքը՝ նուիրուած Հայ Եկեղեցու ծագումին եւ առաքելութեան:

Գարեգին Վրդ. Խաչատուրեան իսկոյն 1906-1907 տարիներուն Սիւսի Հայրապետանոցէն հրաւէր ստանալով ընդառաջեց Տ.Տ. Սահակ Բ Խաչատուրեան Կաթողիկոսի փափաքին ու մեկնեցաւ Սիւս՝ այնտեղի Դպրեվանքին որպէս ուսուցիչ: Ապա՝ Համաշխարհային Ա. Պատերազմէն առաջ եւ անմիջապէս ետքը առաջնորդական պաշտօններու ընտրուելով, դժուարին պայմաններու տակ պաշտօնավարեց Արաբկիրի, Գոնիայի եւ Տրապիզոնի թեմերուն վրայ, եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալով Տ.Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսէն 1922 թուականին: Տարագրութեան ատեն

Գարեգին Վարդապետ Մամպոլճ տարուած է, եւ ապա որպէս Առաջնորդ Գոնիայի անցած է Երուսաղէմ եւ Սահակ Կաթողիկոս-Պատրիարքի օրով 1916 թուին անդամ եղած է Սինոդին: Խաչատուրեան Երուսաղէմէն աքսորուած է Խապայեան Կաթողիկոսի եւ Օրմանեան Սրբազանի հետ ու ժամանակաւոր բնակութիւն հաստատած Դամասկոսի մէջ:

### Առաջնորդ Տրապիզոնի Թեմին

Գարեգին Վրդ. Խաչատուրեան 1919 թուին Առաջնորդ կ'ընտրուի իր ծննդավայր Տրապիզոնի թեմին, յաջորդելով Գէորգ Մ. Վրդ. Թուրեանի, ուր պաշտօնավարեց մինչեւ 1923: Երիտասարդ առաջնորդ Գարեգին Վրդ. հոգածու եղաւ յետեղեռնեան Տրապիզոնի մէջ հաւաքուած 250 հայ որբերուն, որոնց համար դպրոցներ բացաւ, ամէն ամիս դպրոցական հանդէսներ կատարել տուաւ անոնց որպէսզի մոռնային մօտաւոր անցեալի տառապանքի օրերը: Գարեգին Վարդապետ ընդդիմացած է Ամերիկեան որբախնամ վարչութեան պահանջներն եւ չէ թոյլատրած որ հայ որբերը ժողովարան երթային աղօթելու: Ձանոնք պահած է միշտ Հայ Եկեղեցու հովանիին ներքեւ եւ ամէն կիրակի առաջնորդած եկեղեցի: Այս պարագան մինչեւ իսկ «երախանները հացէն զրկուելու» աստիճանին հասցուցած են, եւ սակայն Գարեգին վարդապետ չէ յուսահատած եւ ժողովուրդին դիմելով միջոցներ գտած է եւ երախանները ազատած սնունդի եւ պաշտամունքի սպառնալիքներէն:

### Անդրանիկ Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմին

Ամենայն Հայոց Գէորգ Ե Սուրբէնեանց Կաթողիկոսը Ամերիկայի Գալիֆորնիա նահանգին մէջ նոր թեմ մը հաստատեց դիւրացնելու համար ընդարձակ երկրի տարածքին ցրուած հայութեան հոգեւոր մատակարարութիւնը իր 1927 թուի յատուկ կոնդակով: Թեմը իր անդրանիկ Առաջնորդը ընտրեց յանձին Գարեգին Եպիսկոպոս Խաչատուրեանի որուն ընտրութիւնը իսկոյն վաւերացուց Հայոց Հայրապետը: Գարեգին Եպիսկոպոս պաշտօնին ձեռնարկեց 1928 Մայիսին՝ Ֆրէզնոյի մէջ: Նոյն տարին Ամերիկայի Առաջնորդ Տիրայր Արքեպս. Տէր Յովհաննիսեան իր հրաժարականը կը ներկայացնէր Արեւելեան թեմին ուր ընտրուած էր 1920 Մայիսին:

Նոր թեմի կազմաւորումն ու

գործունէութիւնը կարօտ էր նախնական ու բծախնդիր հոգածութեան ամէն տեսակէտով, որուն ըստ կարելոյն ընթացք տուաւ Գարեգին Եպիսկոպոս: Ծատ չանցած, յաջորդ Հայրապետը, Տ.Տ. Խորէն Ա Մուրաթեպեան Ամենայն Հայոց Կաթողիկոս գինքը նշանակեց Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ֆրանսայի ուր Մարսիլիոյ մէջ նորահաստատ թեմ մը պիտի գոյանար: Իր գործը Մարսիլիոյ մէջ յաջողութեամբ շարունակեց մեծ իրագործումներով իր օժակից եղբայրը՝ Գրիգորիս Եպիսկոպոս Պալաբեան, կառուցանել տալով Մարսիլիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին:

### Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ

Գարեգին Եպիսկոպոսի պաշտօնավարութիւնը Մարսիլիոյ մէջ կարճատեւ եղաւ, միայն մէկ ու կէս տարի, եւ Խորէն Ա Կաթողիկոսի յատուկ կոնդակով 1937 թուին Հայրապետական Պատուիրակ նշանակուեցաւ Հարաւային Ամերիկայի: Որպէս անդրանիկ Առաջնորդը Արժանի թիւի, աւելի երկար եւ բեղմնաւոր գործունէութիւն ցուցաբերեց, մասնաւորաբար կառուցանել տալով Պուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին ու կազմակերպելով շրջանի համայնքները: Մինչեւ 1950 իր վարչական եւ մտաւորական ձեռնհաս առաջնորդութիւնը մատուցանել էր ետք, Գարեգին Արքեպս. Խաչատուրեան ընտրուեցաւ Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ երբ արդէն 70 տարիքը թեւակոխած էր:

### Թրքահայոց վիճակը Սերոպ Նարոյեան Պատրիարքի օրով (1927-1944)

Քեմալական Թուրքիան 1923 Հոկտեմբեր 29-ին հռչակած էր Թրքական Հանրապետութիւն Մուսթաֆա Քեմալի վարչութեան ներքեւ: Քեմալ տիրեց երկրին մինչեւ 1938, եւ իր մահէն ետք կառավարութեան գլուխն անցաւ Իսմէթ Ինչօնիւ: Քեմալ յեղաշրջեց Թուրքիոյ ընկերային եւ քաղաքական վիճակը շարք մը բարեփոխութիւններ մտցնելով երկրէն ներս, ինչպէս արբերէն տառերուն վերջ տալն ու զանոնք փոխարինելը լատինական տառերով: Հանրապետութեան առաջին տարին իսկ ոչ-իսլամ տարրը երկրէն հեռանալ ստիպուեցաւ հակառակ Լոզանի Դաշնագրին երկու տարի պայմանաւճառ տալուն այն բոլոր թրքահայատակներուն որոնք վերադառնալ ուզէին եւ տէր կանգնիլ իրենց ինչքերուն: Եղեռնէն վերապրած հայեր չմնացին իրենց զաւառները, այլ առաջին պատերազմէն զաղթեցին այլ երկրներ որոնց համար Թուրք պետութիւնը «անոնց վերադարձը բաղձալի չէ» ըսելով արձանագրեց իրենց անցագիրներուն մէջ:

Հայոց Պատրիարքարանը կը մնար անկար եւ առանձին: Մեկնած հայերը մինչեւ 1950-ական թուականները չէին ուզեր նոյնիսկ պարզ այցելութեան համար Թուրքիա մտնել: Մեկնողներուն կալուածները կառավարութիւնը կը գրաւէր եւ ինչ որ Օսմանեան կառավարութեան կողմէն կը մնային որպէս ազգային հաստատութիւններ, անցան հանրապետական իշխանութեանց հակակշռին տակ: Ասոնցմէ կարելի է յիշել Կ. Պոլսոյ Թագսիմ եւ Հարպիլէ թաղամասերու միջեւ գտնուող Ս.

Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ անոր կից գերեզմանատունը, որոնք «գործածական չեն» ըսելով գրաւուեցան ու անոնց տեղ շէնքեր շինուեցան:

Իսմէթ Ինչօնիւ աւելի առաջ երթալով գորահաւաքի ենթարկեց փոքրամասնութեանց 25-45 տարեկան այրերը 1941 Մայիսին, եւ 40,000-է աւելի ոչ-իսլամներ 14 ամիս բռնի ճամբաներու կառուցման համար դրկուեցան Կեսարիա, Եոզկաթ, Աֆիոն Գարահիսար, Էրզրում եւ Զոնկուլտաք, ուր 1350 մեթր երկայնքով փապուղի մը կառուցանելու գործին լծուեցան: Անոնց մէջ ակնառու թիւով հայեր կային: Անոնք կը կոչուէին «քան դասակարգ», տարիքի 20 տարիներու տարբերութեան պատճառով: Անոնց մաս կազմող Երուսաղէմ կոպէլեան հայը ըսած է թէ «պաշարման վիճակ հռչակուած էր երկրին մէջ եւ փողոցը երիտասարդներ անձնաթուղթի քննութեան կ'ենթարկուէին եւ ոչմահմետականները անմիջապէս կը գորակոչուէին»:

1942 Նոյեմբերին Ինչօնիւ կողմէ կը հրապարակուէր տիրահռչակ «ուճեւորութեան տուրքը», վարլըք վերկիսի կոչուած դրամաշորթութիւնը, աքսորի եւ ինչքերու գրաւման սպառնալիքի տակ: Պարտադրուած մեծագումար տուրքերը պարգապէս գուշակուած կամ երեւակայածին գումարներ էին քան թէ հաշուուած եւ իրական, անտեսելով ենթակային վճարելու կարողութիւնը եւ կամ անոր դրամական իրական կացութիւնը: 1944-ին այդ տուրքը ջնջուեցաւ եւ սակայն իր մնացուն եւ կործանարար վնասը ետին ձգեց երկար տարիներ:

### Գարեգին Ա. Պատրիարք Կ. Պոլսոյ

Մեսրոպ Եպիսկոպոս Նարոյեան Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուած էր 1927-ին եւ վախճանած 1944-ին, որմէ ետք խանգարուած էր պատրիարքութեան գործընթացը ներքին խլրտուումներու հետեւանքով: Նորընտիր Կաթողիկոս Գէորգ Զ Չորեքեան մօտէն հսկեց Աթոռի ներքին գործերուն, մասնաւոր ինչքերով իր հոգեւոր եղբորմէն՝ Գարեգին Ա Յովսէփեանց Տանն Կիլիկիոյ կաթողիկոսէն, որ իր մօտ կանչէր Պոլսոյ Աթոռի պատասխանատուները որոնք Անթիլիաս գալով հանդիպում ունեցան Հայրապետին հետ: Գարեգին Կաթողիկոս քննելով հարցը զայն տեղեկագրեց Ամենայն Հայոց Գէորգ Զ Կաթողիկոսին առ ի տնօրինումն:

Այդ բոլորը ի վերջոյ յանգեցան բարուք լուծումի երբ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան երեսփոխանական ժողովը 1950 թուի դեկտեմբեր 2-ին ընտրեց Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գարեգին Արքեպս. Խաչատուրեանը որպէս Պատրիարք Հայոց Թուրքիոյ: Գարեգին Պատրիարք իր սրտին մէջ ծրարած էր Պոլսոյ Իւսկիւտար թաղամասին մէջ դպրեվանք մը հիմնելու ծրագիրը որպէս շարունակութիւնը Արմաշի Դպրեվանքին որուն արժանաւոր շրջանաւարտներէն եղած էր ճիշդ իմաստեակ մը առաջ:

Գարեգին Պատրիարքի ընտրութիւնը վաւերացուելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. ի 1951 թուի մարտ 12-ի կոնդակով, հան-

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԳԱՐՈՒԵՍԻ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԳՈՐՀԱՐԸ

Նորերս Երեւանում լոյս է տեսել Հայ աշխարհահռչակ սոցիալական երգիչ Գոհար Գասպարեանի կենսագրական մենագրութիւնը Արմինէ Մելիքի խորալեզանի հեղինակութեամբ: Գիրքը լոյս տեսած է «Յոյս» երկշաբաթաթերթի արտոնատէր Լեւոն Ահարոնեանի մեկենասութեամբ եւ նուիրուած է մայր եւ դուստր՝ Բելլա եւ Անետ Ահարոնեաններու լուսաւոր յիշատակին:

Ստորեւ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք 400 էջերէ բաղկացած պատկերաւոր գրքէն փոքրիկ հատուած մը:

Սուլում էին եգիպտական բուրգերը անապատի քամու շուրթերին պահած աստուածներին անիմանալի, մոգական շշուռները, որ գալիս համբուրում էին «Քոքոյի» աշուկները՝ ընտրեանները շարքում դասելով հնաշամանուկին, ում ծնունդն ինքը հրաշք էր...

Եգիպտոսում, 1924 թուի, Միքայէլ եւ Արուսեակ Խաչատուրեանների ընտանիքում լոյս աշխարհ եկաւ Գոհարիկը, ծնունդը եօթ ամսական, եւ որպէսզի փոքրիկին ինամէին յոյժ հոգատարութեամբ՝ ստիպուած են եղել բամպակի մէջ պահել... Ոմանց «չապրեր» յուսահատ գուշակութիւններին հակառակ, մշտի տատի՝ «Կ'ապրի եւ ցեղիս ալ պարծանքը կ'ըլլայ» մարգարէօրէն ասուած խօսքերը պիտի դեռ օրոցքում պատգամ դառնային փոքրիկ Գոհարին ու փառքի որոտընդոտ ճանապարհ ուղեկցէին նրան, ում իր սիրելի ժողովուրդը մէկընդմիշտ ընդունեց իր սիրտը՝ մեծ արուեստի անկրկնելի Գոհարի փայլը սիրելով ողջ աշխարհով, ծնողի պէս հրճուելով նրա համաշխարհային աստղի համբաւով: Կոլորատուրային սոպրանոյի եգակի ձայնը պիտի դասուէր Մարիա Կալլասի, Ռենատա Տեբալդի, Գալլի Կուրչիի, Ջոան Սադերլենդի, Լիլի Պոնսի աստղաբոցի դասին՝ իր եգակի հմայքով, հնչեղութեամբ՝ օժտուած կոլորատուրներին ոչ յատուկ կրճալին թաւշեայ տեմբրով: Եգակի, աստուածաշնորհ ձայն, որով Գոհար Գասպարեանը միլիոնաւոր սրտերի մեկնել է հայոց հայրենակարօտ «Կոռնկ»-ը, «Անտուսի»ն, կոմիտասեան հնչերանգները՝ իր երգով վրձնելով իր ժողովրդի պատմութիւնը, իր Հայաստան աշխարհի լեռնական ոգին՝ լի անասման քնքշութեամբ...

Որքան սրտեր են յուզմունքից ու հրճուանքից լցուել խանդավառութեամբ, առնչուել, այդ հրաշք արտիստուհու անկեղծ ու խորհրդաւոր հոգուն:

Իր ստեղծագործական շունդալից ճանապարհին փառքը կրնկալուի հետեւեց նրան, օպերային արուեստի գոհարի առջեւ չեն եղել փակ դռներ ու հոգիներ:

Այդ աստուածաշնորհ ձայնը սքանչացրեց աշխարհի հգորներին, որոնք պատիւ համարեցին խոնարհուել նրա արուեստի առջեւ, արժեւորել ու ըստ արժանուրի գնահատել «Հայաստանի Սոխակ»-ին: Նրա ստեղծագործական կեանքի շուրջ 4000 ելուցները ընթացքում հայ ձայնի յաղթարշաւը նուաճեց աշխարհը: Հազարաւոր վերլուծական յօդուածներ, գրախօսականներ են գրուել Գոհար Գասպարեան արտիստուհու անհաս-



տականութեան մասին, ամենուր ակնածանք ու սէր, անթաքուց հիացմունք ու գարմանք «Հայկական հրաշք» լեգենտար արուեստագէտի մեծ ու առինքնող տաղանդի հանդէպ: Աշխարհի մեծ բեմերն ու պալատները հիւրընկալել են Գոհարին՝ նրա անուանը դաջելով փառքի ոսկէ կնիքը: Աշխարհի արուեստի պատմութեան մէջ ոսկեղնիկ գլխատառերով իր անունը փորագրած արտիստուհու կենսագրութիւնը լի է տարատեսակ յիշողութիւններով, աներեւակայելի, փշաքաղող յաջողութիւններով: Իր ոգեղենութեամբ շնչող ձայնով Գոհար Գասպարեանը փշուրում էր ցանկացած սահման՝ օպերային արիաների բարձրաճաշակ կատարումներով արուեստ բերելով համամարդկային գաղափարներ: Նա կերտում էր կերպարներ, որոնք բեմում ապրում էին ու շնչում գարմանալի բնականութեամբ բեմը կենդանացնող, կախարդող անկեղծութեամբ Օպերային արուեստով իր խաղացած դերերով Գասպարեանական չափանիշները բարձր են անհասանելիութեան աստիճան, կատարելութեան չափանիշներ, որոնք պահանջում են առաջին հերթին բնատուր տաղանդ, մեծ սէր, աշխատասիրութիւն ու արուեստին նուիրուելու, նրանով ապրելու եւ ապրեցնելու ինքնամոռաց նուիրում: Թերեւս այս յատկանիշների շնորհիւ են կերտուել նրա մարմնաւորած Անուշը, Ռոզինան, Լակմեն, Նորինան, Օլիմպիան, Վիոլետը, Ջիլդան եւ այլն, որոնք հայ օպերային արուեստի պատմութիւնը կերտող գոհարներ են:

Ապա «Աէ Մարիա»-ն, սրբանախորհուրդ, լուսեղէն աղօթքը, որ չգիտես՝ երկրի՞ց է երկինք ձգուած, թէ՞ Արարիչն ինքն է առաքում այն Գոհարի երկնային ձայնով դէպի մարդկանց հոգիները...

«Արքիմեդեան լայտերով փնտռուած արուեստագէտ նե րից է մեր Գոհարը՝ իր անուան նման թանկ ու նուիրական: Ծնունդը ճիշտ ժամանակին, որ պէսզի իր «Կոռնկ»-ով ու «Ծիծեռնակ»-ով, «Մայր Արաքս»-ով ու «Անտուսի»-ով հռչակէր եւ՝ իրեն, եւ՝ իր ժողովրդին»: Սա մեծն Մարտիրոս Սարեանի գնահատականն է: Եւ ոչ միայն նա, հայ մտաւորականութեան մի ողջ փաղանգ սիրով ու գուրգուրանքով իր երկնակամարն առաւ իր Գոհար լուսաստղին:

Վեհութիւնն ու չիւսմբող հմայքը, անթաքուց գարմանքը, պոռթկումն ու մեղմութիւնը, ամէն մի գագոցում, հոգեվիճակ, ապրում իր կուսական վիճակի մէջ են արտայայտուած տիկին Գոհարի մէջ, որը գալիս է նրա ազնուական էութիւնից: Ոչինչ չի շինծու, ոչինչ չպարունած արտաքին աչքերից, իր երգի պէս վճիտ, երկնային էութիւն:

### ՎԱՍԱԿԱՎՈՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԵԹԵՐԱՆԻ ՄԸ... ՅԱՐՈՒԹ ԵՐԵՑԵԱՆԻ ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԺԻՐԱՅԻ ԹԻԻԹԻՆՅՆԵԱՆ  
Ճարտարապետ

Սրտաբեկ եւ դառնանուշ անցեալին ու ներկային վերակոչուած յիշատակներով է, որ մեր հայկական մշակութի նուիրուած ամսուան մէջ, Ուրբաթ, Հոկտեմբեր 22, 2010ի կէսօրին, ցուրտ հողին յանձնուեցաւ անշունչ եւ յոգնաբեկ մարմինը հայ գրքի ու մշակութի մարդակերտ առաքեալին Յարութ Երէցեանին:

Վաղեմի ընկերոջ մը՝ բարի, ազնիւ, պայծառ մտքով, անշեղ, գաղափարանուէր, բարեացակամ բնաւորութեամբ, բոլոր հանգամանքներու մէջ վստահելի հարազատ մըն էր ան: Մեր գաւկիւն Առնոյի մկրտութեան կնքահայրի հետ եղած հրաժեշտի վերջին հանդիպումն էր այդ: Իր թաղման եկեղեցական արարողութիւնը տեղի ունեցաւ Հոլիվուտ Հիլզ Ֆորթ

կերպութիւններու եւ միութիւններու պատմա-տարագրութեանց մէջ, օրինակ ծառայելու համար յետնորդներուն, երախտաւոր նոր սերունդներուն, որոնք մանաւանդ այնքան պէտք ունին իրենց երէցներու հոգեբարոյական վաստակէն ներշնչուելու եւ հետեւելու անոնց գծին:

Ուրախ ենք որ Յարութին շնորհակալ գործը կը շարունակէ իր գաւակը Առնոն: Ուրեմն ուրտեղ որ հայ կայ «Ապրիլ» գրախանութ թող գայ:

Մենք մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք մեծավաստակ հայուն, հայրենասէրին իր վաղաժամ մահուան առթիւ հանգուցեալի այրիին, գաւկիւն Առնոյին մկրտութեան կնքամայր-արուեստագիտուհի Սիրունին, որդուհի Առնոյին, եղբայրներուն՝ Գրիգորին եւ Ներսիսին, զարմիկին՝ Պարէտ Ծ. Վարդ. Երէցեանին, ինչպէս նաեւ հանգուցեալի ընտանեկան պարա-



Լոն գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ, մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն, հոծ թիւով սգակիր բարեկամներու, գաղափարակիցներու եւ հայրենակիցներու ներկայութեան եւ հանդիսապետութեամբ Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գեորգ Տ. Յովնան Արք. Տէրաբեանի: Սրբազանը սրտայուզ դամբանականով մը անդրադարձաւ վաստակաշատ հանգուցեալի կեանքին ու գործունէութեան, որ եղաւ բեղուն, ազգօգուտ, այս իսկ պատճառով յիշարժան: Հանգուցեալի կենսագրական կարգաց Լորա Փուլուսման, իսկ Ստեփանուհի Ուլուսման ասմունքեց: Յետոյ «Յիշատակի նկարներ» ցուցադրուեցան, որմէ ետք յուղարկուողներու թափօրը հանգուցեալին դազող առաջնորդեցին նոյն եկեղեցւոյ բակին մէջ թաղման վայրը, ուր ծիսակատարութիւններէ ետք, երախտաւոր վեթերանին մարմինը ամփոփուեցան հողին:

Իրմով անվերադարձ կը մեկնի հասարակական, համամարդկային արուեստի, հայկական մշակութի անձնուէր ծառայող գործիչ մը, հայ գրքի ու գրականութեան ազգասէր նուիրեալ Լոս Անճելոսի «Ապրիլ» գրատուն եւ հրատարակչութիւն հաստատութեան սեփականատէր Յարութ Երէցեան, անմոռանալի անուն մը, որուն անունն ու գործը կը մնան անշնջելի յարգարժան Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քանադայի եւ Լիբանանի Նոր Սերունդ եւ Թէքէեան Մշակութային Միութեան, ինչպէս նաեւ հասարակական այլ կազմա-

գաներուն, հարագամներուն եւ բարեկամական լայն շրջանակին:

Յարութը լուսարձակներէ հեռու գործող էր, ամենայն հաւատարմութեամբ, պարտաճանաչութեամբ, պարտականութեանց խոր գիտակցութեամբ յանձնարարութիւններ ստանձնելու բծախնդրութեամբ ու զանոնք կատարելու պարկեշտութեամբ ու նուիրուածութեամբ, միշտ օգտակար ու հանրամաստ գործ մը կատարելու ջանագրութեամբ, յաճախ իր ինքնութիւնն իսկ... ծածկելով:

Այդպէս էր Յարութինը, գործումն ոք կը սիրէր ու կը յարգէր, անոր մէջ տեսնելով խոնարհութեան մեծութիւն մը, ինքզինք սիրոցն ու սիրեց բոլորը: Շատ կը լսէր բայց քիչ կը խօսէր, սակաւախօս էր:

Յարութ Երէցեանը մեզմէ ոչ թէ ֆիզիքայէս հեռացաւ, այլ Քալիֆորնիայի երկնակամարէն աստղի մը պէս շողալով անհետացաւ... Մեզի, քրիստոնեաներու համար չկայ անհետացում առ յաւիտ, որովհետեւ այն որ կը կարծենք վերջնականապէս կորսնցուցած ըլլալ, կենդանի է միշտ եւ ներկայ մեր սրտին, մտքին, հոգիին մէջ, իր թողած քաղցր անմոռանալի յիշատակներով: Ան իր բնորոշիչ գիծերով ու կերպարով յաւերժ քանդակուած կը մնայ մեր մտահորիզոնին վրայ: Ան գնաց միանալու իր բոլոր սիրելիներուն, տանելով իր հետ մեր սէրը, կարօտն ու աղօթքը, յաւիտանական փառքի ու երջանկութեան մէջ:

Կանչ մը յաւերժութեան մէջ: Ան յաւերժացաւ ու պատմութեան անցաւ:

### ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒ

#### ՍԷՑՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄԵԱՆ

Սփիւռ.քահայ գրականութեան ամենատարածուածագրուած ամենախնդրեալ գրողներէն է Յակոբ Կարապենցը (Կարապետեան):

Թերեւս նաեւ ամենամիայնակ ու ամենատառապող գրողներէն: Կարօտը, որ բուժեան զգացումը, "չփոխադարձուած" սէրը, հոգեբանական դրամատիկ իրավիճակները ի սկզբանէ եղել են Կարապենցի կեանքի ուղեկիցը՝ դառնալով նաեւ գրականութեան հիմնական նիւթը:

Ծնուել է Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում՝ 1925-ին: Երեք տարեկան հասակից ապրել է մայրական ամենօրեայ սիրուն ու գուրգուրանքին կարօտ, քանի որ ծնողների համատեղ կեանքը չի ստացուել: Արդէն պատանի, նա հասկացել է հայրենի հողից հեռու ծնունդ լինելու դժբախտութիւնը, բայց եւ հպարտութիւնը՝ Հայաստան աշխարհի գոյութեան համար: «Հպարտ էինք, -գրում է նա իր ինքնակենսագրական պատմութեան մէջ, - որ Հայաստանը կայ, որ եղել ու լինելու է միշտ»:

Իսկապէս, հետագայում, տեղափոխուելով Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Կարապենցն իր ամբողջ գիտակցական կեանքի ընթացքում տառապեց հայրենիքից հեռու լինելու իրողութիւնից, հայրենիքը սիրեց «միակողմանի, անել, ձախող սիրով» եւ մինչեւ կեանքի վերջին տարիները՝ մինչեւ Հայաստանի անկախութիւնը, "անցանկալի անձ" դիտուեց հայրենիքում (Թէեւ մի քանի անգամ այցելել էր Հայաստան, որպէս ամերիկեան կառավարութեան ներկայացուցիչ), իսկ նրա գրականութիւնն անհասու մնաց հայրենի ընթերցողին: Պատճառն այսօր աւելի քան անհետեւի ու անհասկանալի կարող է թուալ. Կարապենցը երկար տարիներ աշխատում էր «Ամերիկայի ձայն» ռադիոկայանում, նրա հայկական բաժնի տնօրէնն էր: Իսկ այն տարիներին «Ամերիկայի ձայնը» արգելուած էր Խորհրդային Միութեան տարածքում՝ հակախորհրդային քարոզչութիւն իրականացնելու համար: Մինչդեռ «հակախորհրդային» ասուածը ընդամէնը ճշմարիտ խօսքն էր երկրի բռնատիրական կարգերի, որի, միակուսակցական ներմտութեան, ազգային դրսեւորումների հանդէպ ցուցաբերող անհանդուրժողականութեան եւ նման մերժելի այլ երե-

ւոյթների մասին:

«Հայ գրող եւ ամերիկացի խմբագիր, Պարսկաստան ու Ամերիկա եւ դրանց արանքում մի տասնեակ երկրներ, իսկ գենիթում՝ Հայաստան՝ առանց հասնելու, առանց պատկանելու, ինչպէս անտէր մնացած նաև՝ լերկ ժաշուտի երախում»... ահա Կարապենց մարդու եւ գրողի իր իսկ տեղորոշումը, երկատուած մի կացութիւն, որով պայմանաւորուած են նրա հոգեկան ու ստեղծագործական ողջ տառապանքն ու փնտրտութիւնը:

Կարապենցը պատկանում է սփիւռ.քահայ այն գրողների թւին, ովքեր իրենց ներկայութեամբ ու վատակով կարեւոր դեր ստանձնեցին՝ իրենց գրականութեան մէջ արտացոլելով ցեղասպանութեան հետեւանքով մէկ սփռուած անհայրենիք հայութեան պատմական ու ազգային-հոգեւոր յիշողութիւնը, դրանով իսկ օգնելով նրանց այլ քաղաքակրթութիւնների միջավայրում կայուած մնալ իրենց արմատներին ու ազգային պատկանելութեանը, լեզուին ու մշակոյթին:

Կարապենցը գրել սկսել է վաղ պատանեկան տարիքից, սակայն իր ստեղծագործութիւնների առաջին հատորը՝ «Անձանօթ հոգիներ» խորագրով, հրատարակութեան է յանձնել միայն 1970 թուականին: Այնուհետեւ, յաջորդաբար լոյս են տեսել "Կարթագենի դուստրը" (վէպ, 1972 թ.), «Նոր աշխարհի հին սերմնացանները (պատմութեան ժողովածու, 1975 թ.), «Միջնարար» պատմութեան ժողովածու, 1981 թ.), «Աղամի գիրքը» (վէպ, 1983 թ.), «Ամերիկեան շուրջպար» (պատմութեան ժողովածու, 1986 թ.) «Անկատար» (պատմութեան ժողովածու, 1987 թ.):

«Երկու աշխարհ, գրական փորձագործութիւններ» (խոհափիլիսոփայական եւ գրականագիտական յոգուածների ժողովածու, 1992 թ.) եւ վերջինը՝ «Մի մարդ ու մի երկիր եւ այլ պատմութեան» ժողովածուն (1994 թ.): Իր այնքան պաշտած հայրենիքում գրողն այդպէս էլ ականատէս չէր ուր ստեղծագործութիւնների հրատարակմանը: Միայն մէկ պատմութեան՝ «Ամերիկեան շուրջպար»-ը 1994-ին տողերիս հեղինակի նախաձեռնութեամբ եւ առաջաբանով հրատարակեց «Արեգ» հրատարակչութիւնը: 1995-ին, արդէն գրողի մահից յետոյ, ակադեմիկոս Հրանտ Թամրազեանի ընդար-

ձակ առաջաբանով «Նայիրի» հրատարակչութիւնը լոյս ընծայեց Կարապենցի երկերի ժողովածուի առաջին հատորը, սակայն նախաձեռնութիւնը շարունակութիւն չունեցաւ:

Այս իմաստով Հայաստանը պարտք է Կարապենցին:

Պատկերելով ժամանակակից սփիւռ.քը՝ նրա վայրիվերումները, նրա անհատական ու հաւաքական տազնայները, նրա վտանգուած ապագան, սերնդափոխութեան հարցը, հայապահպանման մշտադադար չի ընդունել, առանդութիւնների յեղաշրջումը, աշխարհաքաղաքացի հայը, որը տառապում է տնտեսական յեռարանի կառուցման եւ ազգային պատկանելութեան՝ գնալով նուազող ազգային միջուկ գրողն իր հերոսների առօրեայ կեանքի դրուագների միջոցով արծարծում է ոգու եւ լեզուի, հողի եւ հայրենիքի, ազգային յիշողութեան ու պատկանելութեան դրանք որպէս գոյատեւման հիմք, լինելութեան պայման: Եւ նա ուղղակի պաշտում է ժողովրդականութիւն կոչուող հրաշք երեւոյթը, երբ պայի կեանքը, յիշողութիւններն ու երգերը, որոնք անհետանալու եզրին էին, յանկարծ ծնունդ են առնում թոռան մէջ՝ հաւաստելով, թէ աշխարհի ամենահեռու անկիւններում էլ ապրելու է հայ ոգին, հայ երգը, Հայաստանի կերպարը, առանց որոնց ամայի, անիմաստ ու անդէմ է դառնում աշխարհը:

Ընդհանրութեան մէջ Կարապենցի ստեղծագործութիւնները ներծծուած են մարդկային մաքուր, անաղարտ զգացմունքների քնքշութեամբ եւ դրանց կորստի մեծ ցաւով: Նա խոր աստուածային է նկատում, թէ ինչպէս կեանքի մեքենայացումով մարդը կորցրեց իր խարիսխը, սկսեց խարիսխել ինքնակազմութեան անարժէք, անլոյս լաբիրինթոսում: Մեքենան, նրկապաշտութիւնը ճգմեցին մարդուն, սպանեցին նրա երազներն ու անհատականութիւնը եւ իսկ չհողից ու համայնքից՝ նրան նետեցին անորոշութեան երախը: Մարդը սկսեց օտարանալ: Նա խորթացաւ ինքն իրենից, շրջապատից, աշխարհից:

Գրողի տազնապայարոյց մտորումներն աւելի ուժգին են արտացոլուած յատկապէս նրա "Աղամի գիրքը" եւ "Կարթագենի դուստրը" վէպերում, որոնք յուժուր բողբ են բուսութեան, դաժանութեան, հասարակութեան սպառողական մտայնութեան դէմ եւ գրուած են գեղարուեստական բարձր մակարդակով, կուռ, դինամիկ ոճով, հոգեբա-

նական նրբին բացառապատմաներով, բանաստեղծական շնչով:

Կարապենցի գրական արժանիքներից մէկն էլ կերպարներ ստեղծելու նրա մեծ տաղանդն է. ուժեղ, սպառնալից, բացարձակապէս անկրկնելի, իրական, յախուռն: Կարելի է ասել, որ մէկ անգամ ծանօթանալով նրա ստեղծագործութիւնների հերոսներին, այլեւս անկարող ես մոռանալ. նրանք դառնում են ընթերցողի հարագատը, մտերիմը, ընկերը՝ նրան ներքաշելով իրենց բարդ ու հակասական ներաշխարհը, դարձնում իրենց անձնական փոթորիկների, տառապանքների, յոյսերի ու յուսախաբութիւնների, ճշմարտութեան փնտրտութեան մասնակիցը: Այս ամէնի մէջ, անշուշտ, մեծ դեր ունի Կարապենցի խօսքի մշակոյթը: Ինքը՝ գրողը, մեծ երկրպագութիւն ունէր բառի, խօսքի հանդէպ... խօսքը կարեւոր է: խօսքը, որ քանդակուած է ժայռերից, հոգիների ընդերքից, փորձառութեան գետերից, ցաւով ու երկուցով, խինդով ու խենթութեամբ եւ՝ կշիռով ու տրամաբանութեամբ ու նաեւ արեան երգով...»: Հէնց այսպիսին է Յակոբ Կարապենցի խօսքը՝ պարզ, յստակ, ամուր անսթեքեթ, միաժամանակ հարուստ ու յորդուն, մերկ ու գեղեցիկ:

Եւ, այս ամէնով հանդերձ, իր յօդուածներից մէկում Կարապենցը գրում է. «Ես աշխարհը փրկելու պատրանք չունեմ: Եթէ կարողանամ մի կաթիլ գութ ստեղծել հեռու մի հոգում, ապա հասած կը լինեմ իմ նպատակին: Արուեստը հասած կը լինի նպատակին... Եթէ կարողանամ ճշմարտութիւնն ասել այնպէս, ինչպէս որ է, ապա մասամբ հասած կը լինեմ արդարութեան: Արուեստը մեր ազնուագոյն յոյսն է...»

Այո, մարդկութեան ցանկ իրենց հոգում կրող ազնիւ, անկաշառ, մաքուր հոգիների համար արուեստը յոյս է ու նաեւ փրկութիւն:

Մեծ բարեբախտութիւն էր, որ գրողը ականատես եղաւ Հայաստանի անկախացմանը: 1989-ին, Ղարաբաղեան շարժման եւ Հայաստանի անկախացման գործընթացի բուռն շրջանում, նա Հայաստան եկաւ արդէն ոչ որպէս ամերիկեան կառավարութեան ներկայացուցիչ, այլ պարզապէս հայ, որն իր մէջ ժառանգականորէն կրում էր նաեւ իր պայքարի երազանքը՝ ազատ ու անկախ Հայաստանի մասին: Երջեց երկրով մէկ, եղաւ սահմանամերձ շրջաններում, անգամ պաշտպանական դիրքերում, հայ կամաւորականների եւ

Շարք էջ 17



Թեքեան Մշակութային Միութեան  
Լոս Անձելըսի մասնաճիւղը  
Կը հրատարակ Զեպ

**ՎԱԶԳԵՆ ՄԱԹԵԱՆԻ**  
Նկարչական ցուցահանդէսին

Թ.Ս.Մ. ՊԵՇԿԵՕԹԻՐԵԱՆ ԿԵՂՈՒՆ  
1901 North Allen Ave., Altadena, CA 91001

Ցուցահանդէսի բացում  
Յինգզաթի. Դեկտեմբեր 16, 2010  
Երեկոյեան ժամը 8:00ին

Ցուցահանդէսը բաց կը մնայ  
Ուրբաթ Դեկտեմբեր 17, 2010  
Երեկոյեան ժամը 6:00-10:00

ԳԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

### ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅ ԿԵԱՆՔ

#### Շարունակուած էջ 6-էն

կիցները կը ճանչցուին որպէս Մարտ 8-ի ուժեր եւ Մուրիոյ հակառակորդները կը ճանչցուին որպէս Մարտ 14-ի ուժեր:

Եւ մինչ ցոյցեր ու հակացոյցեր կ'որդրեն Լիբանանեան աշխարհը, Ապրիլ 26, 2005-ին, Մուրիական բանակը կը քաշուի Լիբանանի ամբողջ տարածքէն 29 տարուայ ազատարար ապա բռնակալ ներկայութենէ ետք:

Կը կազմուի նոր կառավարութիւն, վարչապետ Նաժիպ Միքաթիի գլխաւորութեամբ, որուն կը վստահուի չէզոք պայմաններու տակ երեսփոխանական ընտրութիւններ կայացնելու պաշտօնը:

Մայիս - Յունիս 2005-ին տեղի կ'ունենան երեսփոխանական ընտրութիւնները, եւ ողբացեալ Հարիրիի կողմնակիցները կը շահին մեծամասնութիւն (128-ի վրայ 72 ամբողջ):

Յուլիս ամսուն կը կազմուի նոր դահլիճ, վարչապետ Ֆուատ Սինիորայի-ի գլխաւորութեամբ, որ եղած էր ողբացեալ Հարիրիի երկար տարիներու գործակիցն ու Ելքեմ-տական նախարարը անոր ղեկավարած դահլիճներուն մէջ: Սինիորայի վարչապետութիւնը կը տեւէ Յուլիս 19, 2005-էն մինչեւ Նոյեմբեր 9, 2009, երբ վարչապետութիւնը կը ստանձնէ Սաատ Հարիրի, ողբացեալ Հարիրիի որդին:

Ֆուատ Սինիորայի վարչապետութեան շրջանը կ'ըլլայ անվերջ պայքարի եւ անհամաձայն իշխանութեան շրջան:

Կ'ըլլայ նաեւ շրջան՝ Հարիրիի սպանութիւնը ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի խողովակով հետապնդելու միջոց:

Մէկ կողմէն, Մուրիոյ բարեկամ՝ Նախագահ Էմիլ Լահուտ, Մուրիոյ օգնութեամբ երկարաձգուած իր նախագահութեան մինչեւ վերջին օրը (Սեպտեմբեր 23, 2007), կը մերժէ գործակցիլ Սինիորայի հետ եւ մեծամասնութեան կողմէ առաջարկուած շատ մը օրինագիծեր կը մնան անգործադրելի որովհետեւ ան կը մերժէ իր ստորագրութիւնը դնել:

Միւս կողմէն, Սինիորան՝ եւ մեծամասնութիւնը իր ետին, ՄԱԿ-ի հետ կնքուած համաձայնութիւններով, (Մարտ 29, 2006-ին - UN Resolution No. 1664- եւ Մայիս 30, 2007-ին - UN Resolution 1757), Լիբանանի համար Միջազգային Ատեան հաստատելու գործը կը յաջողցնէ:

Հոկտեմբեր 2005-էն սկսեալ, Հարիրիի սպանութեան հարցաքննութիւնը կը վստահուի հարցաքննիչներ՝ Տիթլիֆ Միլըս-ի (Dettev Mehlis), Սերժ Դրամբերտ-ի (Serge Brammertz), եւ ներկայիս՝ Տանիէլ Պէլմար-ի (Daniel Bellmare):

Մուրիան անողոք կը մեղադրուի ոճիրով եւ անոր բարեկամ Լիբանանցի չորս գորավարները կը բանտարկուին Տիթլիֆ Միլըս-ի թելադրանքով եւ չորս տարուայ բանտարկութենէ ետք ազատ կ'արձակուին 2009-ին:

Նախագահ Լահուտի իշխանութեան աւարտէն ետք Սեպտեմբեր 2007-ին, Լիբանան կը մնայ առանց նախագահի մինչեւ Մայիս 2008, երբ բանակի հրամանատար Միշէլ Սըլայման, Տոհայի (Քաթար) մէջ գոյացած համաձայնութեան որպէս արդիւնք, նախագահ կ'ընտրուի:

Այս ընտրութիւնը կարելի կը դառնայ Մուրիոյ կողմնակից ուժե-

րու (գլխաւորութեամբ Հրզպալլայի) կողմէ առնուած, հետեւեալ քայլերէն ետք:

- Սինիորայի դահլիճին մաս կազմող Շի'ա համայնքը ներկայացնող վեց նախարարներու հրաժարումով, որ կը տեւէ տարիուկէս, աչպէսով կիրարկելով Թայէֆի համաձայնագրի խախտում (համայնքային աններդաշնակ վիճակ) եւ երկրի անիշխանական վիճակի ստեղծում:

- Պէլքուտի կեդրոնը վրաններ լարելով, երկրի տնտեսութիւնը վտանգելով, Սինիորայի դահլիճը վար առնելու միտումով:

- Միշէլ Աուն-ի նախագահի ընտրութիւնը առաջ քշելով, քաջ գիտնալով, մեծամասնութեան կողմէ գայն նախագահ ընտրելու անկարելիութիւնը:

- Եւ վերջապէս, Հրզպալլայի Պէլքուտի գրաւումը Մայիս 9, 2008-ին, Սիւննի համայնքի արժանապատուութեան ոտնակոխումը, եւ անոր հետեւանքով գումարուած եւ կնքուած Տոհայի Համաձայնագիրը:

Այստեղ տեղին է նշել, թէ շուրջներ լուսեցան Տոհայի Համաձայնագրի ստորագրութենէն ժամեր առաջ, ըստ որոնց, Պէլքուտի երկրորդ ընտրաշրջանին մէջ երկու հայկական երեսփոխանական ամբողջները, մէկ Հնչակ եւ մէկ Դաշնակ հաւասար բաժանումի ենթարկելով միայն կարելի եղած է վերջին վայրկեաններուն Մարտ 14-ի (Սաատ Հարիրի) եւ Մարտ 8-ի (Միշէլ Աուն-ի) կողմերու միջեւ համաձայնութեան հասնիլ:

Մայիս 2008-ին կայացած Տոհայի համաձայնութեամբ ու Միշէլ Սըլայմանի նախագահ ընտրութեամբ, Մուրիա վերագրած Լիբանան, այս անգամ, հաշտարարի դերով, եւ իր վրայէն վերցուեցաւ Հարիրիի սպանութիւնը կազմակերպած ըլլալու մեղքը, եւ Մուրիոյ բարեկամները Լիբանանի մէջ, գլխաւորութեամբ Հրզպալլայի, դարձան անոր քաղաքական ուղղութիւնը ճշդող ուժն ու բազուկը:

Մուրիոյ բարեկամ Մարտ 8-ի ուժերուն բացարձակ տիրապետութիւնը գապուեցաւ եւ կասեցուեցաւ Յունիս 7, 2009-ի երեսփոխանական ընտրութիւններուն, երբ երկու հակադիր ուժերը սաստիկ պայքար մղեցին իրար դէմ, արտասահմանէն քուէներ ապահովելու համար միլիոններ ծախսեցին, եւ Մարտ 14-ի ուժերուն կողմէ տարուած յաղթանակը, նահատակներու ընտանիքներուն արդարութեան հասնելու յոյսը երկարաձգեցին:

Այժմ, Մարտ 14-ի ուժերը կորսնցուցած են իրենց նախկին տիտաններէն Տիւրքի համայնքապետ Ուալիտ Ժումպլաթի նեցուկը, որ կարծէք ճաշակած ըլլալով Արեւմտաքի սուտ խոստումներով եփած ապուրը, բռնած է Մուրիոյ ճամբան, նկատի ունենալով իր համայնքի շահն ու իր զակի ապագան:

Մարտ 14-ի ուժերը կը սպասեն յաղթանակի մը որ պիտի գայ դուրսէն:

ՄԱԿ-ի ստեղծած արդարութեան ատեանը, որ արդէն ունեցաւ իր կեդրոնը Լա Հէյ-ի մէջ Մարտ 1, 2009-ին, կը սպասէ Գանատացի հարցաքննիչ Տանիէլ Պէլմարի ամբաստանագրի արձակման: Կ'ըսուի թէ դատավարութիւնը կրնայ սկսիլ զալ տարուայ Մարտ ամսուն:

Լիբանան եւ աշխարհ կը սպասեն գիտնալու թէ արդեօք Մուրիա՞ն կամ անոր մեղսակից Հրզպալլայ՞ն

պիտի ամբաստանուին Հարիրիի սպանութեամբ, կամ Իսրայէլ պիտի քողագեծուի Հրզպալլայի պետ Սալէտ Հասան Նասրալլայի կողմէ տրուած վերջին տեղեկութիւններու վրայ հիմնուած:

Ոմանք կ'ըսեն ամբաստանագիրը կրնայ տրուիլ զալ ամիս Դեկտեմբերին, ուրիշներ ալ կ'ըսեն զալ տարուայ Մարտ ամսուն:

Մինչ այդ, կ'ըսուի թէ Սէուտիէն եւ Մուրիան անվերջ եւ անսպառ աշխատանք կը տանին սանձելու համար ամբաստանագրի հետեւանքով առաջնալիք իլլատումները կամ Սիւննի-Շի'ա համայնքներու միջեւ անբաղձալի կուրը:

Հրզպալլան ալ կը սպառնայ կտրել իրեն երկարող ձեռքը:

Այս ամենէն վերջ եւ ամէնակարեւորը մեզի համար, Լիբանանահայութեան վիճակն է:

Դժբախտաբար, դրական չէզոքութիւն չպահեց կամ չկրցաւ պահել Լիբանանահայութիւնը ներկայ հակադիր ուժերու միջեւ:

Յունիս 2009-ի երեսփոխանական ընտրութիւններէն ետք, Դաշնակցութիւնը թէեւ ամէն կողմերու հետ բարեկամ դառնալու ճիգեր կ'ընէ, սակայն մինչեւ վիզը Մարտ 8-ի ուժերուն հետ մխրճուած ըլլալ կը թուի: Մինչեւ իրենց վիզը Մարտ 14-ի ուժերուն հետ մխրճուած ըլլալ կը թուի նաեւ Հնչակեաններն ու Ռամկավարները:

Անոնք Հարիրիի հետ կողմնորոշուելով, կարծես կ'ուզեն Դաշնակցութեան հետ հաւասար չէ հաւասար գոյութիւն վայելել ազգային քաղաքական կեանքէն ներս, ինչպէս էր պարագան 1992-էն ի վեր Մուրիոյ իշխանութեան օրօք պարտադրուած Ֆորմիւլայով: Անոնք իրենց արդար տեղը գտած ըլլալ կը կարծեն Մարտ 14-ի ուժերու կողքին, որովհետեւ Հարիրիի եւ անոր հետ գործակցող ուժերու օգնութեամբ գրաւած են Պէլքուտի Հայ համայնքի տրուած երեսփոխանական ամբողջութեամբ մեծամասնութիւնը (4 ամբողջ 3-ը): Ատեւօք, աջի եւ ձախի պայքարի ժամանակ, Դաշնակցութիւնը որպէս աջակողմեան շարժում, մեծապէս օգտուած էր աջին հետ գործակցելով աջակողմեան հակում ունեցող քրիստոնեայ շրջաններուն մէջ եւ իր դիրքը այդպէս գորացուցած տարիներու ընթացքին: Հիմա որ աջի եւ ձախի

պայքար գոյութիւն չունի այլեւս, Հնչակեաններն ու Ռամկավարները կ'օգտուին գործակցելով այն նոյն կողմերուն հետ զորս Դաշնակցութիւնը գործակցած էր ատեւօք:

Բարեբախտաբար, սակայն, Լիբանանահայութիւնը մէկ է եւ ամբողջական իր ազգային շահերու հետապնդման գիտակցութեամբ ու գործով:

Հոն այլեւս չէ մնացած էջմիածնական-Անթիլիասական հնացած պայքար:

Հայկական Յեղասպանութեան պայքարի առաջատարն է Լիբանանահայը:

Ան տակաւին բաբախուն եւ կայտառ սիրտն է Սփիւռքահայութեան:

Աշխարհի ամէն կողմ տակաւին Լիբանանէն հասնող միտքերով, դադափարներով եւ ազգային կեանքը աշխուժացնող ուժերով կը հարստանայ:

Հայկական Սփիւռքը:

Թուրքիոյ Արաբական աշխարհ թափանցումին դէմ անվախ ու անհաւասար պայքար տանողն է Լիբանանահայութիւնը:

Թէեւ իր անցեալի թիւն ու քանակը կորսնցուցած է ան, սակայն իր ազգային առողջ նկարագրի գործութեամբ, կրցած է հայկական արժէքներ եւ իրաւունքներ յայտնաբերել, պահել ու պաշտպանել:

Երկար է շարքը Լիբանանահայերուն, որոնք Լիբանանի ազատ եւ անկաշկանդ պայմաններու տակ, նոյնիսկ Հայաստանցի այցելուներուն տարբեր տեսակի հայկականութիւնով կը գինովցնեն:

Լիբանան հին ու վեհ է իր Մայրի ծառերով ինչպէս հին ու վեհ է Հայր իր Արարատով:

Եւ եթէ, ինչպէս պատմութիւնը կ'ըսէ, իմաստութեան տաճարը Սողոմոնի, շինուած է Լիբանանէն բերուած Մայրի ծառերով, եւ մարդկութեան վերապրումը սկսած է Արաբատի վրայ հանգած Նոյեան Տապանով, ապա Լիբանանահայը, Մայրիներով պատուած իմաստութեամբ եւ Արարատով վեհացած նկարագրով պիտի գիտնայ ու պէտք է գիտնայ իր համայնքի ամբողջական եւ ոչ հատուածական շահերու պաշտպանութիւնն ու պահպանումը, վասն Լիբանանի եւ վասն համայն հայութեան:

### ԳՈՐԻՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱՒԻՆ ԿԱՊՈՂ ՈՂՆԱՇԱՐՆ Է

#### Շարունակուած էջ 7-էն

- ԱՄՆ-ի հայութիւնը քաղաքական եւ տնտեսական ոլորտներում մեծ նեցուկ է թէ՛ Հայաստանի Հանրապետութեանը, թէ՛ Արցախին: Անուրանալի է շուրջ մէկ միլիոն մեր եղբայրների եւ քույրերի օգնութիւնը իրենց արիւնակիցներին, ընդհանուր Հայրենիքին: Մեծագոյն ցանկութիւնն է, որ թէ՛ ԱՄՆ-ի եւ թէ՛ ընդհանրապէս սփիւռքի ողջ հայութիւնը էլ աւելի հզօրանայ, չձուլուի, պաշտպանի իր հայկական ոգին, Մայրենին ու

համագային մեր Մեծ տեսլականը: Իսկ իբրեւ Գորիսի համալսարանի նախագահ կը ցանկանայի բազմաբնոյթ կապեր հաստատել ԱՄՆ-ի համալսարանների ու հայկական տարբեր կազմակերպութիւնների, անհատների հետ՝ ի շահ գիտութեան, մշակութի ու մեր Հայրենիքի: Իսկ սփիւռքահայ մասունքին, նրա անխոջ մշակներին, իրենց դժուարին գործի մէջ՝ տոկոսութիւն ու յարատեւութիւն:

ՀԱՐՑԱԶՐՈՅԸ  
ՌՈՒԶԱՆՆԱԽԱՆՔԱԴԻԱՆԻ

### ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՏՑԻ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

#### Շարունակուած էջ 16-էն

խանդավառ ու յախուռն երիտասարդութեան մէջ: Անպատմելի ուրախ էր ու հպարտ: Բայց նաեւ տխուր ու տաղանայած անկախութիւն կերտող հայրենի ժողովրդի դժուարութիւնների համար: Սակայն, ցաւալիօրէն չկարողացաւ, տե-

սածին ու զգացածին գեղարուեստական մարմնաւորում տայ: Դարիս ամենազաւազիր հիւանդութեանը գոհ՝ նա այս աշխարհից հեռացաւ 1994-ին Բոստոնում (ԱՄՆ), այդպէս էլ չհասցնելով թղթին յանձնել, ինչպէս ինքն է բնորոշել՝ «վաղուայ գրելիքը, որ աւելի կարեւոր էր լինելու»...

### ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ԹԵԼԵԹՈՆԸ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԻ ՉԱՓԱՆԻՇ

#### Շարունակում է 1-ին

պատուէրներով: Հոն էր Արցախը իր վսեմաշուրֆ Նախագահով՝ որ ապահովութիւն կը ներշնչէր յայտնաբերուած Արցախ Աշխարհի լուսաշող գալիքին: Հոն էին վերջապէս, այդ բոլորը իրենց գեղարուեստական բարձր մակարդակի կատարողութեամբ օրուան կառուցողական ձեռնարկը ծաղկեցնող մեր տաղանդաւոր արուեստագէտները, նաեւ՝ Թեյեթրընը հունաւորող մեր հմուտ ատենավարները, որոնք իրենց խանդավառ խելոցներով, հարցազրոյցներով եւ մեկնաբանութիւններով աւելցուցին օրուան թելեթրոնի փայլերը:

Արդարեւ, անմիջական յատկացումներով եւ կատարում խոստումներով՝ պէտք է արձանագրել, որ գոյացաւ աւելի քան քսան միլիոն ութը հարիւր հազար տոյար: Տարակոյս չունիմք, որ միջազգային երկնակամարի տակ տիրող ներկայ անտեսական նգնաժամային

ննչիչ պայմաններու ներքեւ հայ համայնքի նուիրահաւաքով գոյացուցած այս յուսադրիչ գումարը պիտի էապէս յատկացուի հերոսական Արցախ աշխարհի 200 գիւղերու 70 հազար բնակիչ՝ մեր բոյրերու եւ եղբայրներու ծարաւը յագեցնող առողջապահական մաքուր ջրի մատակարարման եւ 100 հազար էր անջրդի, անմշակ լեռնաձորերու յարատեւ ոռոգման ապահովութեան: Այս ակնկալութեամբ՝ մեր շնորհաւորութիւնները կ'առաջնորդեն «Հայաստան» համահայկական հիմնադրամի վարչութեան, իր կազմակերպումով 13-րդ թելեթրոնային յաջող հանգանակութեան առնչութեամբ, այն հաստատ համոզումով, որ շուտով Արցախ աշխարհի ծայրամասերուն ծուարած գիւղերու մեր բոյրերն ու եղբայրները կը բարելաւեն իրենց ըմպելի ջրի եւ անջրդի դաշտերու տագնապը, եւ անյապաղ կը լծուին հայրենի գիւղական շրջաններու յառաջդիմութեան սրբազան աշխատանքին:

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐՄԵՆԵԱՆ

#### Շարունակում է 8-ին

սայգիներ եւս:

Յարութիւնը վերջերս սկսեց գործել արեւալին ուժանիւթի փոխակերպման միջոցով լուսաւորող քաղաքի մարզական կառուցների առաջնելը: Փիքան (Pecan) գրասպասարանը պատկերավոր տաղաւարի տանիքին տեղաւորուած համակարգը ոչ միայն ապահովում է տաղաւար եւ կից շէնքերի էլեկտրական կարիքները, այլեւ աւելցուել ուժանիւթի ուղարկում է էլեկտրական ցանց:

Կառուցի հանդիսաւոր բացման արարողութեան ժամանակ, կենսաթոշակի անցման շնորհիւ գտնուող Յարութիւն Սուրմէնեանի «ն հաճելի անակնկալ էր սպասում:

Առ ի գնահատական հանդէս բերած նախաձեռնութիւններու եւ աշխատանքային յաջողութիւնների լոս Անճելոսի քաղաքապետարանի որոշմամբ կառուցի կոչուել է Յարութիւն Սուրմէնեանի անուամբ, համապատասխան պրոնզիա յուշատախտակի ամրացմամբ կառուցի

մուտքին:

Տեղին է յիշել, որ չնայած Հարաւային Քալիֆորնիա Հայկական ստուար համայնքի ներկայութեանը եւ կենսաքի բոլոր բնագաւառներում շրջանի զարգացմանն ունեցած ներդրմանը, դեռեւս սակաւ են հայկական «հետք» կրող Հանրային վայրերն ու կառուցները: Կարելի է յիշատակել լոս Անճելոսում եւ նրան յարակից քաղաքներում, Ararat, Eukmejian՝ ,Derian, Agajanian անուանումներով փողոցներ, մի քանի հատ յիշելու համար, ինչպէս նաեւ Deukmejian Wilderness Park գրասպասարանի ու Սան Փետրոյի քաղաքապետարանին յարող փողոցի մայթին, ի պատիւ Սան Փետրոյի ծնունդ՝ Քր. Աղաջանեանի տեղադրուած աստղը:

Յարութիւն Սուրմէնեանին ընծայուած գնահատականը պատիւ է հայ անուանը, ինչպէս նաեւ Հայաստանի պետական ձարտարագիտական Համալսարանային, նախկին Պոլիտեխնիկ, որի 1960 թուականի շրջանաւարտն էր իր Ե Յարութիւնը:

### ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐՏՈՂԱՆԻՆ ՅԻՇԵՑՈՒՑ

#### Շարունակում է 1-ին

րով բորոքեցան Նահատակաց հրապարակի յուշարձանին շուրջ:

Հաւաքին ներկայ գտնուեցան պետական նախարարներ՝ Ժան Օղասապեան եւ Աբրահամ Տէտէեան, խորհրդարանի անդամներ՝ ընկ. Սեպուհ Գալփաքեան, Յակոբ Բագրատունի, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Արթուր Նազարեան, Լիբանանի թեմի բարեջան Առաջնորդ՝ Գեղամ արք. Խաչերեան, Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու նախագահ վերապատուելի Փօլ Հայտոսթեան, Գերապայծառ Վարդան Ազգարեան, Վերապատուելի Սողոմոն Քիւլապեան, Հայ քաղաքական երեք կուսակցութիւններու, մարզական, բարեսիրական, մշակութային, երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներ, նախկին նախարարներ եւ երեսփոխաններ:

Լիբանանեան քայլերի գիւղերունը թեմէն ետք Սարո Թոնթեան հայերէն եւ արաբերէն լեզուներով կատարեց հանդիսութեան բացման խօսքը եւ ըսաւ. «Այսօր խուռներամ շարքերով հաւաքուած ենք Լիբանանի Նահատակաց հրապարակին վրայ որպէսզի բարձրաձայն ո՛չ գոռանք օսմանեան ցեղասպանին անմիջական ժառանգորդը հանդիսացող՝ այսօրուան Թուրքիոյ իշխանութիւններուն անբարոյ ոտնձգութիւններուն դէմ: 6 Մայիս 1916-ին այստեղ կախաղան բարձրացած համայն Լիբանանի նահատակներու յուշարձանին շուրջ եկած ենք մեր լիբանանցի հայրենակիցներուն յիշեցնելու, թէ արիւնարբու օսմանեան բռնատիրութիւնը հարիւր հազարաւոր զոհեր խլած է Մայրիկներու երկիր Լիբանանէն»:

Յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան խօսք առաւ ընկ. Ալէք Քէօշկէրեան: Ան ըսաւ թէ՛ ժողովուրդներու պատմութիւնը դէպքերու եւ իրադարձութիւններու խտացում մըն է: Ոմանք շատ սուղ վճարած են պատմութեան գինը՝ իրենց նահատակներուն արեամբ: «Այսօր հաւաքուած ենք Նահատակաց հրապարակին մէջ լիբանանեան հայրենիքի մեր հայրենակիցներուն ահագնագ հնչեցնելու Լիբանանին սպառնացող օսմանեան նոր բռնատիրութեան նկրտումներէն»: Ընկ. Քէօշկերեան նշեց պատմութեան այն հանգրուանները ուր Լիբանան եւ Միջին Արեւելքի այլ ժողովուրդներ շատ ծանր վճարած են օսմանեան բռնատիրութեան լուծին տակ: Ան ըսաւ թէ Թուրքիոյ պատմութիւնը լեցուն է ոճիրներու, ցեղային գտնումներու, բնաջնջումներու եւ վերջապէս ցեղասպանութեան դէպքերով: Ան ըսաւ, որ նախընտրելի պիտի ըլլար եթէ Թուրքիոյ վարչապետը իր այցելութիւնը սկսէր Նահատակաց հրապարակին՝ ծաղկեպսակ մը գետեղելով Լիբանանի նահատակներուն յուշարձանին առջեւ: Ընկեր Քէօշկերեան զգուշացուց, որ այսօրուան Թուրքիան կը մնայ միեւնոյնը: Այսինքն իսրայէլի ռազմավարական դաշնակիցը եւ արաբական իրաւունքները ոտնակոխ դարձնող պետութիւնը:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան խօսքը փոխանցեց տրքթ. Մարտիկ Աւետիքեան: Ան նշեց, թէ Թուրքիոյ պատմութիւնը լեցուն է ոճիրներով եւ ժողովուրդ-

ներու տեղահանութիւններով: Տրքթ. Աւետիքեան լիբանանցի ժողովուրդին վերջիչեցուց 20-րդ դարու սկիզբը լիբանանեան հայրենիքի կրած ծանր տառապանքը օսմանեան բռնատիրութեան օրերուն: Ան ըսաւ, թէ՛ Նահատակաց հրապարակը որուն մէջ տեղի կ'ունենայ այսօրուան հաւաքը կառուցուած է օսմանեան բռնատիրութեան օրերուն լիբանանցի նահատակներուն յիշատակին:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խօսքը փոխանցեց Աւետիս Կիտանեան: Ան ըսաւ, որ ժողովուրդներ իրաւունք չունին մոռնալու իրենց անցեալը եւ ցաւ յայտնեց, որ ոմանք սկսած են մոռնալ Լիբանանի պատմութեան տխուր էջերը: Աւետիսեան հարց տուաւ ինչպէ՞ս կարելի է մոռնալ բազմաթիւ առիթներով Լիբանան ներխուժող, Լիբանանը քանդող, կագա ներխուժող եւ կագաչի մարտակներուն դժբախտութեան պատճառ դարձող իսրայէլի դաշնակից այսօրուան Թուրքիան:

Կիտանեան մերժեց ձեռք մեկնել հայ, յուն, կիպրացի, քիւրտ եւ արաբ ժողովուրդներուն իրաւունքներուն տիրացող Թուրքիոյ: Ան անընդունելի գտաւ ձեռք մեկնել արիւնարբու ձամալ փաշայի թողնելի էրտողանին եւ պահանջեց որ Թուրքիոյ վարչապետը եւ թրքական իշխանութիւնները պաշտօնապէս ճանչան պատմութեան մէջ գործած իրենց յանցագործութիւնները եւ վերադարձնեն ու հատուցեն իրենց բռնախլած հողերը եւ ժողովուրդներուն իրաւունքները:

Ժողովուրդային հաւաքին եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի թեմի բարեջան Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Ան նշեց, թէ լիբանանահայերը այսօր կանգնած են այն հողին վրայ ուր անոր գաւակները հարիւր տարի առաջ իրենց կեանքի գնով պաշտպանեցին լիբանանեան հայրենիքը: «Կանգնած ենք աշխարհի բոլոր երկիրներէն պահանջելու ճանչնալ այն ցեղասպանութիւնը, որ տեղի ունեցաւ իրենց աչքին առջեւ եւ պատմութեան մէջ ճանչցուած է իբրեւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն: Կանգնած ենք միջազգային ընտանիքին պահանջելու, որ ցեղասպանը մինչեւ այսօր ամենայնով եղանակներով կը փորձէ խեղաթիւրել պատմական ճշմարտութիւնը»: Առաջնորդ սրբազանը հարց տուաւ, թէ ինչպէս կարելի է մոռնալ այս ցաւը երբ ցեղասպանը կ'ուրանայ իր յանցագործութիւնը:

Ան հարցուց արդեօ՞ք ժողովուրդավարութեան անունով կարելի է ծածկել գործուած ոճիր մը կամ ուրանալ արդարութիւնը: Առաջնորդ սրբազանը նաեւ դիտել տուաւ, թէ պատմութեան ընթացքին թուրքերը հայ ժողովուրդի կողքին ասորի, յուն, կիպրացի եւ պուլկար ժողովուրդներուն նոյնպէս ենթարկած են ցեղային գտնան եւ բնաջնջման եւ աւելցուց. «Արդեօ՞ք պաղեստինցի պիտի ուրանայ այն ինչ որ կատարած է սիրոնական պետութիւնը»:

Առաջնորդ սրբազանին եզրափակիչ խօսքէն ետք էրտողանի Լիբանան կատարած այցելութեան դէմ լիբանանահայ քաղաքական կուսակցութիւններու հաւաքը փակուեցաւ Սարգսյան պատահական պատմի երգով:

REQUEST FOR PROPOSALS (RFP #7541 & RFP #7540) RFP7541: HUD-VETERANS AFFAIRS SUPPORTIVE HOUSING (HUD-VASH) PROJECT-BASED VOUCHER RFP7540: SECTION 8 HOMELESS PROGRAMS SERVICES  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified agencies interested in providing for the following services:  
RFP 7541 HUD-Veteran Affairs (Issue 11-18-2010; Due 12-09-2010)  
RFP 7540 Homeless Program (Issue Nov 2010; Due TBD)  
Copy of the RFP's may be obtained beginning 11-18-2010 at <http://www.hacla.org/ps/> or call (213) 252-5405 or 252-1832.  
12/2/10  
CNS-1990305#  
MASSIS WEEKLY

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

**massispost.com**  
daily news updates

### ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ 34ՐԴ ՏԱՐԵԿԱՆ

Շարունակուած էջ 8-էն

նին, Տիար Միհրան Սասունեանին, իրաւաբան Նարո Չիլինկիրեանին, հաշուապահ Արամ Ակինեանին, ճարտարագէտ Վիգէն Խաչատուրեանին եւ ճարտարապետական գծագրութիւններու իր օգտակարութիւնը բերող՝ Փօլ Պագիրկանեանին:

Այս տարի մեծարուեցան Միութեան ծառայող Տիար Գուրգէն Պէրքշանլար եւ Տիար Էտի Սարաֆօղլու, իրենց աւելի քան տասը տարիներու եւ Տիկին Մարի Խաչիկեան ալ իր աւելի քան տասներկու տարիներու ծառայութեանց համար ստացան մէկ աղամանդով զարդասեղներ: Բացակայ էին Միութեան Մայր Վարչութեան փոխատենագետ՝ իրաւաբան Էտիլին Միւնասեան եւ Միութեան հիմնադիր անդամներէն՝ Տիար Կիւլպէնկ Մովսէսեան, որոնք աւելի քան քսան տարիներու իրենց ծառայութեանց համար արժանի նկատուեցան երկու աղամանդով կրծքանշանի: Ինչպէս նաեւ Մշակութային Յանձնախումբի ատենագետ՝ Տօքթ. Յով-

հաննէս Գուլակ Աւետիքեան որուն պիտի շնորհուէր 3 աղամանդով կրծքանշան իր 30 տարիներու անխոնջ ծառայութեանց համար: Նշենք թէ սոյն կրծքանշանները սիրայօժար պատրաստուած էին Միութեան անդամք՝ Սարո եւ Բաֆֆի Մարուքեան եղբայրներու կողմէ: Ատենագետը հաղորդեց աւետիս մը թէ Միութեան անդամներէն Տիար Միրիճան Կիւրեղեանի գաւակը՝ Նարեկ Կիւրեղեան New Zealandի Oakland քաղաքին մէջ կայացած աշխարհի թիավարութեան ախոյեանութեան մրցումին՝ չորրորդ հանդիսացած է:

Գեղարուեստական յայտագիրը ճոխացաւ Զանգեզուր նուազախումբի կողմէ ներկայացուած ճոխ երգերով ու նուագներով, պարահարթակը լեցուն պահելով իսանդակաւ պարողներով:

Հանդիսութիւնը շքեղ, հաճոյալի գիշեր մըն էր: Այս խօսքերը կ'ըսենք նկարագրելով չափազանց յաջող գիշեր մը: Անոնք որոնք չկրցան ներկայ գտնուիլ այս հրաշալի ճաշկերոյթին, թող նկատի առնեն յառաջիկայ տարի:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

Շարունակուած էջ 8-էն

ին նշանաւոր առակներէն մի քանի հատը եւ գուարճացուցին հանդիսատենները իրենց դիպուկ եւ իմաստալից պատգամներով: Նշմարելի էր Դ. դասարանի աշակերտներուն ունեցած դերասանական տաղանդը, որ իրապէս բացառապատկեցաւ իրենց համարձակ կեցուածքներուն եւ շարժումներուն ընդմէջէն: Բ. եւ Գ. կարգերու աշակերտները բեմականացուցին «Սամայ Մուրը», ուր նշմարելի էր մեր փոքր աշակերտներուն մօտ եղած անհաւատալի կարողութիւնը երկարաշունչ տողեր անգիր ընելու ու արտասանելու: Ը. կարգի աշակերտներէն՝ Քրիստափոր Խաչատուրն ու Շահէ Տէմիրճեանը, արտասանեցին Պարոյր Սեւակի «Հայաստան»ը եւ ցուցադրեցին իրենց պատրաստած power point-ը: Ապա, երկու այլ աշակերտուհիներ Ը. կարգէն՝ Վանա Կէօքլէօգեանն ու Մելինէ Թոփճեանը, ցոյց տուին Վանայ Լիճին եւ Սուրբ Խաչ եկեղեցիին վրայ իրենց

պատրաստած power point-ն ու ներկայացուցին եկեղեցիին պատմութիւնն ու անդրադարձան վերջերս պատահած իրադարձութիւններուն: Դպրոցիս տնօրէն՝ Պարոն Շահէ Մանկրեանը, փակեց հանդիսութիւնը շնորհակալութիւն յայտնելով այն բոլոր ուսուցիչներուն, որոնք ամենայն բժանդրութեամբ պատրաստած էին սոյն ձեռնարկը եւ իր սրտի գոհունակութիւնը յայտնեց, ըսելով որ իրապէս իրախուսիչ երեւոյթ մըն էր հանդէսին ընթացքին դիտել եւ լսել մեր աշակերտները որոնք ամենայն հանգստութեամբ կրնային արտայայտուիլ մեր մայրենի լեզուով, որ անշուշտ բոլոր հայկական վարժարաններու հետապնդած նպատակներէն մէկն է: Վարձքը կատար Յովսէփեան Վարժարանի ուսուցչակագմին եւ բոլոր հայ մշակներուն, որոնք ամէն օր մեծ մարտահրաշխաններու պատնէշին դիմաց կանգնած կը փորձեն վառ պահել մեր լեզուն ու հարուստ մշակոյթը:

### 50 ՏԱՐԻ ԾԱՓԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱԿ

Շարունակուած էջ 13-էն

մշակոյթի բնագաւառում 50 տարիներ յետոյ միջազգային համար ուղարկուած յատուկ շքանշանն ու Պատուոգիրը:

«Գայիանէի» 50-ամեակի առթիւ ողջունի հեռագրեր էին յղել տեղուոյ հայկական համայնքի տարբեր հաստատութիւնների ու կազմակերպութիւնների ղեկավարներ, իսկ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պուէնոս Այրեսի մասնաճիւղի քարտուղար Անտոնի Սարաֆեանը ՀԲԸՄ անունից յանձնեց յուշատախտակ:

Համերգի ընթացքում ելոյթ ունեցան նաեւ երգչուհի Միրտա Սաջեանը, երգիչներ Սերիօ Չափրագեանը եւ Խոսեան Դարբինեանը, եւ «Կոմիտաս» երգչախումբը, որոնք ներկաների կողմից արժանացան ջերմ ծափահարութիւններ: Իսկ Արժեքներու հայ Մշակութային Միութիւնը նրանց յանձնեց շքեղ ծաղկեփնջեր: Արժեքներու

հայ Մշակութային Միութեան կողմից շնորհակալութեան ջերմ խօսքեր եւ ծաղկեփնջեր ստացաւ նաեւ կոմպոզիտոր Թուրվանդա Գիրբեյիկեան Հայթայեանը, որի ստեղծագործութիւններից շատերն են ոգեշնչման աղբիւր դառնում եւ նոր պարային բեմադրութիւնների ստեղծման համար:

Չէին կարող մոռանալ ու ծաղկեփնջեր չմատուցել նաեւ խոսնակներ Իվան Բիսեկլիա Լոմոմջեանին եւ Ռոսալբա Սարաֆեանին, որոնք իրենց հաճելի ու արդէն բոլորի համար ծանօթ ու սիրելի դարձած ձայներով «Գայիանէի» ամէն ելոյթ ուղեկցում են ոչ միայն որպէս համերգավարներ, այլեւ ներկաներին ներկայացնում են Հայաստանի պատմութեան դրուագներ, պատմում հայկական պարի մասին:

Հաշուի առնելով պարախմբի անցած հարուստ ուղին, կատարողական վարպետութիւնն ու հանդիսատենների մշակական սէրը՝ Պուէնոս Այրես նահանգի կառավարու-

### ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

դիսաւոր գահակալութիւնը տեղի ունեցաւ պատրիարքարանի մայր եկեղեցւոյ մէջ ուր կատարեց նաեւ իր ուխտը ի ներկայութեան պատրիարքական տեղապահ Գէորգ Արքեպս. Արսլանեանի, որմէ ստացաւ նաեւ պատրիարքական ասան: Ներկայ էր նաեւ Գրիգոր Գուսան Եպս. Կարապետեան: Նախորդ պատրիարքի ընտրութենէն յայտնի դարձած էր «Կ. Պոլսոյ» պատրիարքի կոչումին փոփոխութիւնը «Պատրիարք Հայոց Թուրքիոյ» պաշտօնական տիտղոսին, քանի որ Հանրապետութեան մայրաքաղաքը փոխադրուած էր Անգարա եւ Կ. Պոլսոյ անունն ալ փոխուած Իսթանպուլի: Յաջորդ պատրիարքներ կրեցին պաշտօնական այդ տիտղոսը որ պետութեան կողմէ ալ պարտադրուած էր:

#### Սուրբ Խաչ Դպրեկանքը

Գահակալութենէն երկու տարի ետք, 1953-ին, արդէն Դպրեկանքի «շքեղ եւ պատկառելի» մասնաշէնքին բացումը կը կատարուէր հոկտեմբեր 11-ին նախագահութեամբ Պատրիարքին եւ ի ներկայութեան հոգեւորական դասուն: Յաջորդ տարուան յունուարին աշակերտութիւնը, գրեթէ լրիւ Գարեգին Պատրիարքի անմիջական հոգածութեամբ բերուած Թուրքիոյ ներքին գաւառներէն, փոխադրուեցաւ նոր շէնքէն ներս ու այդ օր պաշտօնական բացումն ալ տեղի ունեցաւ ի ներկայութեան Իսթանպուլի կուսակալ Տոքթ. Ֆահրետտին Քերիմ Կէօքալի, Յունաց Աթենակորաս Տիեզերական Պատրիարքի, եւ այլ պաշտօնական անձանց: Գարեգին Պատրիարքի բացատրութեամբ դպրեկանքը պիտի ըլլար «կրօնի եւ գիտութեան վառարանը, որուն ջերմութեամբ եւ լոյսով իսկական մարդ պիտի դառնային աշակերտները, բարի եւ առաքինի քաղաքացիներ միանգամայն, հետեւելու համար այն կոչումին որուն համար սահմանած է գիրենք Աստուած»:

Ս. Խաչ Դպրեկանքի աշակերտութեան թիւը 30-էն 100-ի բարձրացաւ, եւ տաս տարի անց՝ 150-ի: Տանամեակի սեմին նշուած է յատուկ գրքոյկին մէջ թէ «դպրեկանքը ընդհանրապէս Թուրքիոյ ներքին գաւառներէն ընդունած է աւելի քան 300 ուսումնաստեւէ երիտասարդներ»: Դպրեկանքը իսկականին մէջ երկրորդական բարձրագոյն դպրոցի համապատասխան ծրագրով ընթացած է, ինը տարուան ընթացքով եւ երեք բաժիններով՝ Միջնակարգ, Բարձրագոյն եւ Ընծայարան, երեքական տարիներով: Թէեւ սակաւաթիւ եղան հոգեւորական դարձողները, սակայն նաեւ դպրեկանքի անունին տակ վարժարանը հասցուց անհամեմատօրէն աւելի աշխարհա-

կան ասպարէզներու հետեւող երիտասարդներ:

Դպրեկանքի առաջին տեսուչը եղաւ Գարեգին Մ. Վրդ. Գազանճեան, ծնած Իսթանպուլ, (յետագային Գարեգին Բ Պատրիարք), որուն օրով տողերուս գրողը 1955 թուին այցելած է եւ մի քանի օրով նորաշէն դպրեկանքին մէջ մնացած որպէս հիւրը Գարեգին Հայր Սուրբին: Գարեգին Պատրիարք չհասաւ ձեռնադրելու դպրեկանքի առաջին շրջանաւարտները, թիւով երեք, որոնք քահանայական կարգ եւ վեղար ստացան Շնորհք Պատրիարքի ձեռամբ: Ուրիշներ փոխադրուեցան Երուսաղէմ, հոն ուսան եւ ձեռնադրուացան ու շնորհալի հոգեւորականներ դարձան ծառայելով կարեւոր թեմերէն ներս:

#### Գարեգին Պատրիարքի Վախճանը

Թուրքիոյ Հայոց 81-րդ Պատրիարքը՝ Երանաշնորհ Գարեգին Արքեպս. Խաչատուրեան յանկարծական կերպով կը վախճանէր 1961 յունիս 22-ի հինգշաբթի օր, Սրբոց Թարգմանչաց Սահակայ եւ Մերսոպայ տօսին, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամերգութեան ընթացքին: Առանց առողջական մասնաւոր ախտանշանի նոյն առաւօտուն, ընկերակցութեամբ Շնորհք Եպս. Գալուստեանի, «մեծ ուրախութեամբ» ինքնաշարժով կը հասնէր եկեղեցի: Ժամերգութիւնը նոր սկսած, «Աշխարհ ամենայն» երգի աւարտին տկարութեան նշաններ ցոյց տալով Գարեգին Պատրիարք աւանդատուն կը քաշուէր եւ Շնորհք Եպիսկոպոս եւ քահանաներ գինք շնչաւազու վիճակի մէջ կը գտնէին: Բժիշկներ կը հասնէին եւ սակայն կէս ժամ ետք, երկու կարեւոր յանձնարարութիւններ տալէ ետք կը վախճանէր 81 տարի քր լրացուցած, տասը տարի եւ վեց ամիս գահակալելէ ետք:

Շնորհք Եպիսկոպոսի տեղեկութեանց համաձայն վախճանեալ Պատրիարքը իր վերջին վայրկեաններուն ըսած էր, նախ, երկարաձգել տալ Շնորհք Եպիսկոպոսի Թուրքիա կեցութիւնը որ կ'աւարտէր յաջորդ օրն իսկ, բնակութեան ժամկէտը լրացած ըլլալով, եւ երկրորդ Թարգմանչաց տօսին առիթով կը փափաքէր որ Շնորհք Սրբազան նախորդ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի շիրմին վրայ նոյն օրն իսկ «հոգւոց» մը արտասանէր Շիրիլի գերեզմանատան մէջ: Այս երկուքն էին իր վերջին յանձնարարութիւնները: Վախճանեալ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի արժանաւոր յաջորդը կ'ըլլար նոյն ինքն Շնորհք Եպս. Գալուստեան որ կ'ընտրուէր նոյն 1961 տարուոյ վերջերը ու կը գահակալէր յաջորդող Ս. Մննդեան շաբթուն:

թիւնը «Գայիանէի» 50-ամեակին նուիրուած բոլոր միջոցառումները յայտարարել է Նահանգային մակարդակով մշակութային կարեւորութիւն ունեցող միջոցառումներ:

Երկար տարիների բեղուն գործունէութիւնն ու ծափերից թնդացող շատ դահլիճներ ցանկանք «Գայիանէի», որ հայկական պարի մի իսկական դպրոց է դարձել, որտեղ, համոզուած ենք, դեռ շատ սերունդներ կը սնունեն ժողովրդական երաժշտութեան ու ազգային պարի ակունքներից:

Կարծում եմ սրանից 50 տարի առաջ, երբ մի իսկուրդ ոգեւորուած

երիտասարդներ, ոգեշնչուած Հայաստանի Պարի Պետական Համոյթի ելոյթներից, հաւաքուեցին ու որոշեցին ստեղծել հայկական պարի մի խումբ, չէին էլ պատկերացնում, որ դա սկիզբն էր մի ճանապարհի, որով պիտի քայլէին 50 երկար ու ձիգ տարիներ ու որին պիտի միանային նաեւ յաջորդ սերունդները: Սակայն այսպիսին է արեան կանչը, այսպիսին է հայի սրտի բաբախմանը համահունչ հայ պարի կրօնի յիմունքն ու այդ՝ թուամ էր վայրկեանական բռնկման պահին ստեղծուած «Գայիանէ» պարախումբն ահա արդէն կեանքի յոբանջան է տօնում:

# Everyday Low Prices! Holiday Specials!

 <p><b>Grey Goose Vodka</b> All Flavors</p> <p><b>\$21.99</b></p>	 <p><b>Ketel One Vodka</b></p> <p><b>\$17.99</b></p>	 <p><b>Skyy Vodka</b></p> <p><b>\$8.99</b></p>	 <p><b>Espolon Tequila</b> Silver or Reposado</p> <p><b>\$19.99</b></p>	 <p><b>Dewar's 12 Years</b></p> <p><b>\$15.99</b></p>
 <p><b>Johnnie Walker</b> Blue Label</p> <p><b>\$119.99</b></p>	 <p><b>Hennessy VS</b> Cognac</p> <p><b>\$21.99</b></p>	 <p><b>Hennessy XO</b> Cognac</p> <p><b>\$109.99</b></p>	 <p><b>Courvoisier VS</b> Cognac</p> <p><b>\$16.99</b></p>	 <p><b>Courvoisier VSOP</b> Cognac</p> <p><b>\$32.99</b></p>
 <p><b>Jack Daniel's</b> Old No. 7 Whiskey</p> <p><b>\$14.99</b></p>	 <p><b>Bacardi Rum</b> Light or Gold</p> <p><b>\$8.99</b></p>	 <p><b>Baileys Irish Cream</b> Liqueur</p> <p><b>\$13.99</b></p>	 <p><b>Sailor Jerry</b> Rum</p> <p><b>\$11.99</b></p>	 <p><b>Jacques Cardin</b> VSOP Cognac</p> <p><b>\$14.99</b></p>
 <p><b>Chivas Regal</b> 12-Yr Scotch Whisky</p> <p><b>\$15.99</b></p>	 <p><b>Ciroc Vodka</b> All Flavors</p> <p><b>\$18.99</b></p>	 <p><b>Dewar's White Label</b> Whisky 1.75L</p> <p><b>\$24.99</b></p>	 <p><b>Grand Marnier</b> Liqueur</p> <p><b>\$29.99</b></p>	 <p><b>Cazadores Reposado</b> Tequila</p> <p><b>\$19.99</b></p>
 <p><b>Jagermeister</b> Liqueur</p> <p><b>\$14.99</b></p>	 <p><b>Avion Silver</b> Tequila</p> <p><b>\$29.99</b></p>	 <p><b>Maker's Mark</b> Bourbon Whisky</p> <p><b>\$18.99</b></p>	 <p><b>Jose Cuervo</b> Especial Tequila</p> <p><b>\$9.99</b></p>	 <p><b>Remy Martin 1738</b> Cognac</p> <p><b>\$42.99</b></p>
 <p><b>Ksarak Arak</b></p> <p><b>\$17.99</b></p>	 <p><b>Captain Morgan</b> Spiced Rum</p> <p><b>\$10.99</b></p>	 <p><b>Sauza Hornitos</b> Plata Tequila</p> <p><b>\$14.99</b></p>	 <p><b>Disaronno</b> Originale</p> <p><b>\$14.99</b></p>	 <p><b>Noy 10 Yr</b> Armenian Brandy</p> <p><b>\$29.99</b></p>

**Southern California's Premier Wine & Spirits Superstore**

**3 LOCATIONS TO SERVE YOU**

- 1785 E. Washington Blvd., Pasadena (corner of Allen) • (626) 794-7026
- 825 W. Glenoaks Blvd., Glendale (corner of Highland) • (818) 242-0683
- 13654 Burbank Blvd., Sherman Oaks (corner of Woodman) • (818) 785-6529

**Hours: Mon. - Sat., 9am - 8pm • Closed Sunday**

\*This ad expires on 12/14/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.  
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

**MISSION**  
Wine & Spirits